

## ՊԱՏՄԱԿԱՆ

### ՀՈԳԵԻՈՐ ԿՈՉՈՒՄ ԵՒ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՓՈՐՁՈՒԹԻՒՆ

(Խոսքով Եպս. Էմիրզեանի դէպքը իբրեւ պատմագիտական դիտարկում)

Խոսքով (Անդրանիկ) էմիրզեանի դէպքը Պոլսոյ եկեղեցական կեանքի նորագոյն պատմութեան մէջ կը ներկայացնէ միաժամանակ թէ՛ անհատական, թէ՛ հաստատութեանական գործընթացներու հատման կէտ մը: Իր կեանքը՝ սկիզբ առած Գումգաբուի հոգեւոր ու կրթական միջավայրին մէջ, եւ հասած մինչեւ եպիսկոպոսական ծառայութեան ու անկման բարդ հանգրուանը, մաս կը կազմէ Պոլսոյ Հայոց պատրիարքութեան, ինչպէս նաեւ Մայր Աթոռի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան փոխարարներութիւններու լայնագոյն դաշտին: Այս ուսումնասիրութիւնը կը փորձէ վերակազմել Խոսքով (Անդրանիկ) էմիրզեանի կենսագրական ուղին՝ հիմնականին մասնաւորապէս աղբիւրներու եւ վկայութիւններու հիման վրայ, զայն դիտարկելով իբրեւ պատուհան՝ բացուած XX դարու երկրորդ կէսի պոլսահայ հոգեւոր-հասարակական իրականութեան վրայ: Աշխատութիւնը կը միտի ո՛չ միայն փաստագրել պատմական որոշ դէպք մը, այլ նաեւ բացայայտել այն խորքային հակասութիւնները, որոնք կը բնորոշեն եկեղեցական կոչումին եւ անձնական ինքնութեան յարաբերութիւնը:

Պոլսոյ եկեղեցական կեանքի մօտաւոր անցեալի անցուդարձերուն հարեւանցի ծանօթութիւն մը ունեցողներն իսկ գիտեն անշուշտ հոգելոյս Տ. Խոսքով Ա. Քհնյ. էմիրզեանի անունը: Դեռ կ'ըլլան անձեր ալ, որոնք անձնական շփում եւ ծանօթութիւն ալ ունեցած ըլլան իրեն հետ, բարեկամացած, վայելած մտերմութիւնը:

Ես իսկ, դեռ դպրոցական, ծանօթացած էի հետը. օր մը Ղալաթիոյ եկեղեցւոյ բանկալին առջեւ, ողբ. Կարօ Սրկ. Թէրզեան (ապա Տ. Կարապետ Քահանայ) բռնեց օձիքէս ու իրեն յատուկ շեշտով «համբուրէ տեսնեմ սրբազանին ձեռքը» ըսելով, զիս դրաւ առջեւ մէկու մը, զոր նախապէս չէի տեսած, չէի ճանչցած, անունն իսկ չէի լսած: Աշխարհական հագուստով, նիհար ու երկայնահասակ, մեղամաղձիկ արտայայտութեամբ, հեզ ու խոնարհ երեւոյթով եւ զիս տեսնելուն պէս շրթներուն գծագրուած քաղցր ու ամօթխած ժպիտով անձ մը... «Աստուած օգնական», ըսի կարկամած եւ աջը առնելով համբուրեցի ու ճակատս տարի: Այդ օրէն ետք յաճախ սկսայ լսել այդ անձի անունը՝ Խոսքով էմիրզեան, նախկին եպիսկոպոս, որ շուտով վերստին քահանայացաւ ու իր ծառայութիւնը մատուցեց Հայց. եկեղեցւոյ: Այս փոքրիկ աշխատասիրութիւնը իր մասին է եւ իր յիշատակին համար...

\* \* \*

Անցեալի փառքէն մերկացած ըլլալով հանդերձ, 1930-ականներուն Գումգաբուն տակաւին կը պահէր հայկական թաղի իր ինքնութիւնը: Տեղւոյն Պէզճեան Մայր վարժարանի երկսեռ աշակերտութեան թիւը, որ կը հասնէր 482-ի<sup>1</sup>, ինքնին խօսուն վկայութիւնն է ըսուածին: Էմիրզեան ընտանիքի գեղեցիկ տունը կը գտնուէր մերձակայ Ինճիրտիպի հայ-բողոքականաց վարժարանի դիմացը: Ակնցի Կարապետ Գոց շուկայի մէջ կաշիի գործով կը պարապէր, իսկ կինը՝ Մայրենի, արաբկիրցի էր, տանտիկին:

Ահա Անդրանիկ կը ծնի այս տունը, 1932 թուականին: Ընտանեկան խաղաղ բոյնի մը մէջ կ'անցնէր իր մանկութիւնը: Ծնողները զինք առաջնորդեցին Պէզճեան Մայր վարժարան, երբ հասաւ դպրոցական տարիքը:

Դպրոցին զուգահեռ, ինչպէս կը պատահէր սովորաբար, կը սկսի եկեղեցի յաճախել. փոքրիկն Անդրանիկ Գումգաբուի Ս. Աստուածածին Աթոռանիստ Մայր Եկեղեցւոյ սրբազան ու խնկաբոյր կամարներուն ներքեւ է որ առաջին անգամ կը ծանօթանայ Հայ Եկեղեցւոյ սքանչելի շարականներուն, հոգեպարար արարողութիւններուն: Կիրակիները, ինչպէս բանաստեղծը կ'ըսէ, իր հոգիին համար տօն մըն էր արդարեւ: Առաւօտ կանուխ Ինճիրտիպիէն կ'ուղղուէր Գումգաբու՝ «Տէր զի բազում»էն սկսեալ պարտաճանաչօրէն ներկայ գտնուելու արարողութեանց: Ժամանակ մը վերջ եկեղեցւոյ հանդէպ ունեցած վառ սէրը գոհացնելու, շարականներու, արարողութիւններու վերաբերեալ աւելին սորվելու հետաքրքրութեան յագուող տալու նպատակով կը սկսի յաճախել եկեղեցւոյ երաժշտապետ Յովհաննէս Մէհթէրեանի դասերուն, որոնք տեղի կ'ունենային ամէն շորեքշաբթի, տեղւոյն Գողթան դպրաց դասու հինաւուրց ուսումնարանին մէջ:

1719 թուականին հիմնադրուած Մայր Եկեղեցւոյ Գողթան դպրաց դասը իր աւելի քան երկդարեայ պատմութեան ընթացքին խոր աւանդութիւններ ձեւաւորած հաստատութիւն մըն էր արդարեւ, երբ փոքրիկն Անդրանիկ էմիրզէեան ոտք կը դնէր ուսումնարանի շէմը: Յարութիւն ամիրա Պէզճեանի կողմէ, Եկեղեցւոյ վերաշինութեան զուգահեռ, ԺԹ դարասկզբին կառուցուած եւ 1865-ին ճարտարապետ Կարապետ Պալեանի կողմէ վերաշինուած ուսումնարանը, 1923-ին ճարտարապետ Սաֆարեանի ձեռամբ հիմնապէս վերանորոգուած էր<sup>2</sup>:

Համբարձում Լիմոնճեանով սկսած, Արիստակէս Յովհաննէսեանով ու Նիկողոս Թաշճեանով ուղեւորած մեծանուն երաժշտապետերու փաղանգը, շարունակուած էր Գրիգոր Մէհթէրեանով՝ գալու եւ յանգելու համար այլ Մէհթէրեանի մը՝ Յովհաննէս Մէհթէրեանի:

Մեծանուն Գրիգոր Մէհթէրեանի շունչն ու հոգին դեռ եւս կը յածէր Մայր Եկեղեցւոյ եւ ուսումնարանի մթնոլորտին վրայ: Ինչպէս տարիներ անց պիտի գրէր Մէհթէրեանի սաներէն գրագէտ Եղուարդ Սիմֆէշեան (Ծիծեռնակ գրչանունով), անուանի երաժշտապետը «իր վաստակով եւ հունձքով անջնջելի անուն մը եւ թուական մըն է[ր] ինքնին»<sup>3</sup>: Ըստ Սիմֆէշեանի, Մէհթէրեան եղած էր Մայր Եկեղեցւոյ դպրական սերունդի հիմնադիրն ու անկորուստ ներշնչարանը: «Քանի՜ քանի դպիրներ հասան իր հմտութեան լոյսէն առաջնորդուած, օծուեցան իր շունչով եւ փեթակի մը վերածեցին Մայր Եկեղեցիի երբեմնի Ուսումնարանը»<sup>4</sup>: Մէհթէրեանը բնորոշող դիպուկ նախադասութիւն մըն է Գողթան դպրաց դասու դպրապետ Միհրան Գարագաշի սա վկայութիւնը. «... մենք կը ձանձրանայինք ուսանելէ, ան չէ՛ր ձանձրանար ուսուցանելէ. երբեք քանքարաթաքոյց չեղաւ ան, հաւասարապէս տուաւ բոլորին»<sup>5</sup>:

Փոքրիկն Անդրանիկ դարձաւ սանը Յովհաննէս Մէհթէրեանի, որ կը փորձէր լաւագոյն կերպով տեւականացնել Գրիգոր Մէհթէրեանի եւ իր նախորդներուն աւանդը:

<sup>2</sup> Յոբէրիմական յուշամատեան Գումգաբուի 250-ամեայ դպրաց դասուն եւ 45-ամեայ Գողթան երգչախումբին 1719-1924-1970, պատրաստեց՝ Վարուժան Քէօսէեան, Պոլիս, 1971, էջ 71:

<sup>3</sup> Ծիծեռնակ, Գրիգոր Մէհթէրեան, «Մարմարա», Թիւ 9657, Պոլիս, 20 Մարտ, 1971, էջ 2:

<sup>4</sup> Ծիծեռնակ, Գրիգոր Մէհթէրեան, «Մարմարա», Թիւ 11724, Պոլիս, 1 Յունուար, 1977, էջ 2:

<sup>5</sup> Ողբ. երաժշտապետ Գրիգոր Մէհթէրեանի յիշատակի ոգեկոչման հանդիսութեան առթիւ..., «Ժամանակ», Թիւ 18208, Պոլիս, 6 Մայիս, 1958, էջ 2:

Արդարեւ, Գումգաբուհի Մայր Եկեղեցւոյ միջավայրն ու տեղւոյն Գողթան դպրաց դասուհին աւուրց ուսումնարանի մթնոլորտը լի էին Համբարձում Լիմոնճեաններու, Նիկողոս Թաշճեաններու, եւ մա՛նաւանդ Գրիգոր Մէհթէրեանի շունչով, զոր նորերուն կը փոխանցուէր անոնց արժանաւոր յաջորդ Յովհաննէս Մէհթէրեանով: Մայր Եկեղեցւոյ եւ Ենիգիւղի եկեղեցիներու երախտաւորներէն, էմիրզէեանի դասընկերն ու բարեկամը տիար Երուանդ Քէշիշօղլու մեզի հետ ունեցած անձնական զրոյցի ընթացքին կը պատմէր, թէ «շատ բան սորված են Մէհթէրեանէն», 1940-ական թուականներուն:

Պէզճեան Մայր վարժարանի ուսումնառութեան տարիները կ'աւարտին: Ըստ ընկալեալ սովորութեան, փոքրիկ աշակերտը իր ուսումը պէտք է շարունակէր Ղալաթիոյ Կեդրոնական վարժարանին մէջ, որ շատ աւելի յարմար ու նախընտրելի էր իր դիրքով: Սակայն Երկրորդ աշխարհամարտի մառախլապատ թուականներուն այս հաստատութիւնը ծնողներու միտքերուն մէջ անպատեհութիւն յառաջացնող բացասական կէտ մը ունէր. այդ շրջանին զինուորական պարտադիր ծառայութիւնը դարձած էր քառասուն ամիս, մօտաւորապէս երեքուկէս տարի: Ո՛չ միայն պատանիներ, այլեւ զինուորական տարիքի հասած չափահասներ զինուորական ծառայութենէ խուսափելու համար կ'ա՛մ կ'երկարաձգէին իրենց ուսման շրջանը եւ կ'ամ դպրոց, հայերու պարագային յատկապէս, Կեդրոնական կ'արձանագրուէին: Այս իսկ պատճառով պատանի Անդրանիկի ծնողները չեն փափաքիր, որ իրենց փոքրիկը յաճախէ առաւելաբար մեծահասակներու յաճախած Կեդրոնականը, եւ ուրեմն կը նախընտրեն Բանկալթիի Վիեննական Մխիթարեան վարժարանը:

1825-ին Բերա հիմնադրուած Վիեննական Մխիթարեան հայրերու վարժարանը 1836-ին փոխադրուած էր Բանկալթի թաղամասը: Ընդարձակ պարտէզի մը մէջ, էմիրզէեանի յաճախած թուականներուն նորակառոյց, քարուկիր ու հոյաշէն շէնքի մը մէջ իր ազգանուէր առաքելութիւնը տեւականացնող կրթական հաստատութիւն մըն էր ան եւ կը շարունակէր Մխիթարեանց խոր աւանդութեամբ օժոն, աւելի քան հարիւր տարիներէ ի վեր ուսեալ ու բարեկիրթ զաւակներ պարգեւել ո՛չ միայն Թուրքիոյ, այլեւ աշխարհասփիւռ հայութեան: Այդ տարիներու տնօրէնն էր Կարապետ Քիւրքճեան (1889-1963), սակայն վարժարանի շունչն ու ոգին, անկասկած, Մխիթարեանց Պոլսոյ վանատան մեծաւոր Հ. Հմայեակ Մ. Վրդ. Համբարեանն (1881-1952) էր, իսկ Հ. Սարգիս Վրդ. Բարոյեան, Հ. Գրիգորիս Վրդ. Մանեան, Հ. Գաբրիէլ Վրդ. Այանեան, Թորգոմ Գալընեան, Կարապետ Զիլաճեան, տքթ. Շահնուր Շահէն, տքթ. Վարդ Շիկահեր, Գոհարիկ Տիրատուրեան եւն. որպէս ուսուցիչ կը պաշտօնավարէին վարժարանէ ներս:

Պատանի Անդրանիկ Գումգաբուէն Բանկալթի՝ դպրոց երթալու համար առտուն կանուխ, ժամը 7-ի պէս ճամբայ կ'իյնար: Ընկերոջ՝ Երուանդի հետ նախ կը բարձրանային Պէյազըտ, ուրկէ կ'առնէին զիրենք Հարպիէ փոխադրելիք հանրակառքը ու 8:30-ի պէս կը հասնէին դպրոց: Դպրոցական առօրեան լեցուն էր պարապմունքով, այնքան որ դպրոցէն ետք շատ անգամ ժամը 17-էն մինչեւ 19-ը սերտողութեան պահեր ալ կ'ունենային: Մեծաւոր Հ. Հմայեակ Վրդ. Համբարեան սերտողութեան պահու մը ընթացքին կը հետաքրքրուի այս երկու ուշիմ ու իրարմէ անբաժան մտերիմ պատանիներով եւ կը հարցնէ անոնց, թէ ուրկէ՞ կու գան: Երբ կը տեղեկանայ անոնց համեմատաբար հեռաւոր Գումգաբուէն վարժարան հասնելու հանապազօրեայ «ոգիսական»ին, կ'առաջարկէ իրենց մնալ գիշերօթիկ բաժինը, որ հաստատուած էր վարժարանի հիմնադրութեան իսկ օրէն սկսեալ: Ընտանիքներու ալ համամտութեամբ, Անդրանիկ էմիրզէեան եւ ընկերը գիշերօթիկ կը գրուին: Երկու շաբաթը անգամ մը միայն արտօնուած էին

տուն դառնալու:

Կիրակի մը, դասասենեակ մը առանձնացած, եկեղեցական մեներգներ ու շարականներ կ'երգէին, երբ յանկարծ դուռը կը բացուի եւ կը յայտնուի ներքին հսկիչ Կարպիս Այանեան՝ յետագայի Հ. Գաբրիէլ Վրդ. Այանեանը: «Դպի՞ր էք, տղա՛ք», զարմանքով կը հարցնէ ան: Հաստատական պատասխանը ստանալէ ետք, Այանեան կ'ըսէ անոնց, թէ այսուհետեւ մաս պիտի կազմեն երգչախումբին:

Արդարեւ, վարժարանի յարակից Մխիթարեան վանատան Անարատ Յղութիւն մատրան երգիքին տակ 1936 թուականին կազմուած էր Մխիթար դպրաց դաս-երգչախումբը, որու ղեկավարն էր հմուտ երաժիշտ ու խմբավար Կարպիս Այանեան: Մայր Եկեղեցւոյ Գողթան դպրաց դասէն իրենց քաղած բարիքները պատանիները կը սկսին բաժնել Մխիթարեանց յարկէն ներս. Այանեան երգչախումբը սկսած էր վարել մէկ քովը Անդրանիկը, իսկ միւս քովը Երուանդը առած եւ Ս. Պատարագի երգեցողութեան կարեւոր մեներգները կը յանձնէր անոնց:

Անդրանիկ էմիրզէեան 1948-ին Ը դասարանը աւարտելէ վերջ կը լքէ Մխիթարեանը: Դասընկերը՝ Երուանդ կը տեղեկացնէ, որ ան ունէր մէկ նպատակ՝ «վարդապետ ըլլալ», ըլլալ հոգեւորական, դառնալ եկեղեցական՝ սպասաւորը Հայաստանեայց Ս. Եկեղեցիի: Այս վեհ նպատակին հասնելու համար արդէն իսկ երիտասարդութեան սեմին կանգնած Անդրանիկ կը դիմէ հոգեւոր վերին իշխանութեան եւ կը սկսի հետեւիլ պատրիարքարանի յատուկ լսարանի դասընթացներուն:

Հոգեւորական ըլլալու ճանապարհին իր ցուցաբերած խանդավառութիւնը կը գնահատուի Կ. Պոլսոյ հայոց նորընտիր պատրիարք Տ. Գարեգին Արք. Խաչատուրեանի եւ եկեղեցական իշխանութեանց կողմէ եւ Անդրանիկ էմիրզէեան սարկաւազ կը ձեռնադրուի ձեռամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր, 25 Դեկտեմբեր 1951-ին, երեքշաբթի, Ս. Ստեփանոսի տօնին, Գումգաբուի Աթոռանիստ Մայր Եկեղեցւոյ մէջ, ուր կը ծառայէր ի տղայ տիոց: Օրուան պատարագիչն էր Տ. Գարեգին Աբեղայ Գազանճեան (յետագային պատրիարք հայոց Կ. Պոլսոյ): Էմիրզէեան մինչեւ 1953 թուականը կը շարունակէ հետեւիլ պատրիարքարանի երգիքին տակ ընթացող ընծայարանի դասընթացներուն: Այդ միջոցին իրեն կը յանձնուին զանազան պարտականութիւններ ալ. այսպէս, ան կը վարէ պատրիարքարանի նորահաստատ պաշտօնական հրատարակութեան՝ «Շողակաթ» հանդէսի վարչութիւնը: Էմիրզէեան 1953-1954 տարեշրջանին տարբեր պաշտօններ կը ստանձնէ նաեւ Սկիւտարի նորաբաց Ս. Խաչ դպրեւանքէ ներս:

### ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ

Կիլիկիոյ հայաթափումէն ետք երկար տարիներ մնայուն կայք մը փնտռած, թափառումի ու անորոշութեամբ լի տարիներէ ետք 1930-ին վերջապէս Պէյրութի արուարձաններէն Անթիլիաս հաստատուած Սիսի կաթողիկոսութեան՝ նոյն տարին իսկ Սահակ Բ Խապայեան շնորհազարդ կաթողիկոսի կողմէ հիմնադրուած դպրեւանքը իր շուրջ երեսնամեայ պատմութեան ընթացքին մինչ այդ քանի մը թրքահայ աշակերտ ընդունած էր արդէն<sup>6</sup>: Անդրանիկ Սրկ. էմիրզէեան կու գար ամբողջացնելու այդ շարքը՝ դառնալու համար միակը, որ պիտի ստանար քահանայական օծում՝ դառնալով անդամը Անթիլիա-

<sup>6</sup> Մինչ այդ Անթիլիասի դպրեւանք ուսանելու փութացած էին Բանի մը թրքահայեր, որոնք էին՝ Օննիկ Պալեան (ծն. 1935, Պոլիս), որ հոն կը մնայ 1950-1954 թուականներուն, Ոսկիան Մանըլլեան (ծն. 1936, Սեբաստիա), որ Անթիլիաս կը մնայ 1952-1953-ի միջեւ, Գրիգոր Պալլմեան (Պոլիս, 1944-2024, Պոլիս), որ 1960-1963 կ'ուսանի դպրեւանքի մէջ եւ Վահան Տէր Յակոբեան (ծն. 1940, Մալաթիա), որ 1960-1962 թուականներուն կը մնայ Անթիլիաս:

սի միաբանություն:

Անդրանիկ Սրկ. էմիրգլեան արդեօք ինչո՞ւ իր քայլերը Անթիլիաս ուղղելու պարտաւորուեցաւ: Զինք ճանչցած անհատներու հետ մեր ունեցած անձնական զրոյցներէ մեկնելով կարելի է ենթադրաբար ըսել, թէ էմիրգլեան մերժում ստացած էր Պոլսոյ եկեղեցական իշխանութենէն: Սարկաւագ ձեռնադրուելէ, պատրիարքարանէ ներս զանազան պարտականութիւններ ստանձնելէ ետք ի՞նչ պատահած էր արդեօք, որ Գարեգին Արք. Խաչատուրեան պատրիարքը յարմար չէր նկատած անոր ձեռնադրութիւնը:

էմիրգլեան Անթիլիաս կը հասնէր, երբ մեծանուն եկեղեցականի մը՝ Գարեգին Ա Յովսէփեան կաթողիկոսի 1952-ին վախճանումէն ետք գոյացած քառամեայ թափուր շրջանը վերջ գտած էր աղմկայարոյց ընտրութեամբ մը եւ Սսոյ Աթոռը ունեցած էր նոր գահակալ մը՝ յանձին Զարեհ Ա կաթողիկոսի (Փայասլեան): Բայց տակաւին հանդարտած չէր շիկացած մթնոլորտը:

1957-1958 թուականներու միջեւ Անդրանիկ կ'ուսանի Անթիլիասի դպրեմանքի ընծայարանի բաժինը, զոր կ'աւարտէ փայլուն յաջողութեամբ: Իր շրջանին դպրեմանքի տեսուչն էր Տ. Արտաւագդ Վրդ. Թրթռեան, որ Տանն Կիլիկիոյ Զարեհ Ա կաթողիկոսի հրամանով փոխարինած էր ուսման համար Օքսֆորտ մեկնած Տ. Գարեգին Վրդ. Սարգըսեանը (յետագային Կաթողիկոս Ամենայն Հայոց): Այդ տարեշրջանին որպէս ուսուցիչ կը պաշտօնավարէին Տ. Գրիգոր Աբեղայ Փիտէճեան (եւրոպական երաժշտութիւն, շարականներու ուսուցում), Տ. Երուանդ Աբեղայ Աբէլեան (Ս. Գրոց պատմութիւն), Տ. Կորին Քհնյ. Շրիգեան (Քրիստոնէական, աշխարհագրութիւն), ինչպէս նաեւ բանաստեղծ ու մտաւորական Վահէ Օշական (ֆրանսերէն), նախկին ստանպուլահայ գրագէտ Մինաս Թէօլէօլեան (հայերէն), անուանի բանաստեղծ Մուշեղ Իշխան եւլն.:

Անդրանիկ Սրկ. էմիրգլեան 13 Յուլիս 1958-ին կուսակրօն քահանայ կը ձեռնադրուի Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ՝ ձեռամբ դռան եպիսկոպոս Տ. Արտակ Եպսկ. Մանուկեանի<sup>7</sup>, օծակից ունենալով Սեդրակ Սրկ. Լափաճեանը, որ կը վերանուանուի Տ. Սմբատ Աբեղայ<sup>8</sup>: Խիստ հաւանաբար անունը ստացած էր արմաշական նահատակ Խոսրով Եպսկ. Պեհրիկեանէ, ինչպէս իր օծակիցը՝ նոյնպէս արմաշական նահատակ Սմբատ Սաատէթեանէ:

Տ. Խոսրով Աբեղայ իր անդրանիկ Ս. Պատարագը կը մատուցէ ու կը քարոզէ Ս. Աստուածածնի Վերափոխման տաղաւարի տօնին, 17 Օգոստոս 1958-ին, Պէյրուսի Ս. Քառասնից Մանկանց Եկեղեցոյ մէջ<sup>9</sup>:

Ձեռնադրութենէ ետք Խոսրով Աբեղայ Կիլիկիոյ կաթողիկոսութեան կառույցներէն ներս կը լծուի մանկավարժական ու գրական բեղուն գործունէութեան: Այսպէս, ան Քրիստոնէական կը դասաւանդէ դպրեմանքէն ներս (1958-59), ուր կը վարէ նաեւ հսկիչի պարտականութիւն: Կը դառնայ կաթողիկոսութեան «Հասկ» հանդէսի խմբագիրը՝ 1959-1961 թուականներուն<sup>10</sup>, ինչպէս նաեւ՝ գրատան վարիչն ու կաթողիկոսութեան արկղակալը: 1960-1961 ուսումնական տարեշրջանին Խոսրով Աբեղայ Անթիլիասի դպրեմանքէն ներս, Ժառանգաւորաց բաժնի ու քահանայից լսարանի սաներուն կը

<sup>7</sup> Արսէն Աբեղայ, Ձեռնադրութիւններ Կաթողիկոսարանի Մայր Տաճարին մէջ, «Հասկ», Թիւ 7, Յուլիս, 1958, էջ 304-309:

<sup>8</sup> Ապա արքեպիսկոպոս, վախճանեալ 2010-ին:

<sup>9</sup> Պատարագ եւ Բարոզ Աթոռի միաբաններուն կողմէ, «Հասկ», Թիւ 8-9, Օգոստոս-Սեպտեմբեր, 1958, էջ 366:

<sup>10</sup> Ստեփանոս Արդ. Փաշայեան, Մատենագիտութիւն Հասկ ամսագրի, Անթիլիաս, 1905, էջ 5:



դասաւանդէ Ս. Գիրք<sup>11</sup>:

Մէկ քանի տարի վերջ, առ ի գնահատութիւն իր ծառայասիրութեան, 25 Մարտ 1961-ին, շաբաթ, յետ երեկոյեան ժամերգութեան, ձեռամբ Կիլիկիոյ Զարեհ Ա Կաթողիկոսի, կը ստանայ վարդապետական գաւազան<sup>12</sup>:

Տ. Խոսրով Վարդապետ միշտ կը շարունակէ իր մանկավարժական ծառայութիւնը կաթողիկոսութեան կրթական հաստատութիւններէն ներս: Այսպէս, 1961-1962 տարեշրջանին գործնական ծիսագիտութիւն կ'աւանդէ դպրեւանքի մէջ, քահանայից դասարանի աշակերտներուն: Խոսրով Վարդապետ հովուական ծառայութիւնն ալ կը շարունակէր՝ քարոզելով Պէյրութի հաւատացեալ ժողովուրդին: Իր այս հոգեւոր գրոյցներէն մէկուն հանդիպեցանք «Հասկ»ի մէջ, ուր տպուած էր «Յետ յարութեան տօներ» յօդուածը՝ խօսուած Պէյրութի ձայնասփիւռէն, 4 Յունիս 1961-ին, կիրակի, կէսօրէ յետոյ ժամը 4.45-5.00-ի միջեւ<sup>13</sup>:

Խոսրով Վարդապետ հովուական ծառայութիւնը իրականացնելու միջոցին արկածի մըն ալ կ'ենթարկուի: 25 Փետրուար 1962-ին, Ս. Վարդանանց տօնի առիթով ան մասնակցած էր Անթիլիասէն դէպի հիւսիս գտնուող պատմական Պիպլոս, այժմ Ճըպէյլ քաղաքը հանգրուանած Թուշոց Բոյն որբանոցի մէջ կատարուած հանդէսին: Վերադարձի ճամբուն վրայ ինքնաշարժի դժբախտ արկած մը կը պատահի եւ կը վիրաւորուի Հայր Սուրբին ոտքը, այս պատճառով ան կը զրկուի այդ տարուան Մեծ պահոց շրջանին հոգեւոր ծառայութիւն բերելէ<sup>14</sup>:

### ՎԵՐԱԴԱՐՁ ՊՈԼԻՍ

Տարիներու ուսման, ծառայութեան եւ օժման յաջորդեց վերադարձը այն քաղաքը, ուր ամէն ինչ սկսած էր: Տ. Խոսրով Վարդապետ կը վերադառնար Պոլիս՝ այլեւս ո՛չ թէ որպէս երիտասարդ սարկաւազ կամ ուսուցիչ, այլ իբրեւ կուսակրօն հոգեւորական, իր փորձառութեամբ ու նոր հանգամանքով: Նորընծայ հոգեւորականը կը մտնէ դարձեալ այն միջավայրը, որուն ծանօթ էր մանկութենէ, բայց հիմա անոր առջեւ կը բացուի աւելի լուրջ պատասխանատուութիւններով ու հոգեւոր պարտաւորութիւններով լեցուն անդաստան մը: Պոլիսը իր եկեղեցիներով, վարժարաններով ու խճողուած անցուդարձերով, դարձեալ պիտի դառնար իր ծառայութեան ասպարէզը եւ անգիտակցաբար նաեւ իր ճակատագրական փորձութեան թատերաբեմը:

Տ. Գարեգին Արք. Խաչատուրեան պատրիարքի 22 Յունիս 1961-ին վախճանումէն եւ Տ. Շնորհք Արք. Գալուստեանի 11 Հոկտեմբեր 1961-ին պատրիարք ընտրուելէն ետք, Տ. Խոսրով Վրդ. Էմիրզէեան 10 Մայիս 1962-ին կը վերադառնայ Պոլիս<sup>15</sup>: Այս թուականէն սկսեալ Տ. Խոսրով Վարդապետ կը դառնայ անբաժանելի մէկ մասնիկը ստանալու հայ եկեղեցական կեանքին՝ հանդիսապետելով կամ մասնակցելով արարողութեանց, քարոզելով ու Ս. Պատարագ մատուցելով:

Տ. Խոսրով Վարդապետ միջոց մը ետք կրօնագիտութիւն ու հայերէն կը սկսի դասաւանդել Ս. Խաչ դպրեւանքէ ներս, իսկ Նոյեմբեր 1963-ին ալ կը ստանձնէ դպրեւան-

<sup>11</sup> Տեղեկագիր Դպրեւանքի ԼԱ. (1960-61) տարեշրջանի, Գարեգին վարդապետ [Սարգիսեան], ամդ. էջ 238:

<sup>12</sup> Գաւազանի տուցութիւն Հոգջ. Տ. Խոսրով Վարդապետի, «Հասկ», Թիւ 3, Մարտ, 1961, էջ 128:

<sup>13</sup> Յետ Յարութեան տօներ, «Հասկ», Թիւ 6, Յունիս 1961, էջ 213-215:

<sup>14</sup> Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միաբանութիւնը ազգային-հոգեւոր ծառայութեան մէջ, «Հասկ», Թիւ 2-3, Փետրուար-Մարտ, 1962, էջ 123:

<sup>15</sup> Գիշերը առաւօտը իր մէջ կը կրէ (հրատարակութիւն Ս. Խաչ Դպրեւանքի 50-ամեակին առթիւ), Ստանպուլ, 2003, էջ 66:

քի փոխտեսչությունը<sup>16</sup>:

Մինչ այդ, 18 Փետրուար 1963-ին Անթիլիասի մէջ յանկարծամահ կ'ըլլայ Կիլիկիոյ Զարեհ Կաթողիկոսը: Խոսքով Վարդապետ այդ շրջանին Պոլիս է, ուրկէ ցաւակցական հեռագիր մը կը տողէ հետեւեալ բովանդակութեամբ. «Շիշլի, 22 Փետրուար 1963 / Խոր ցաւով տեղեկացայ Վեհափառ Հայրապետի մահը: Կ'ուզէի անձամբ գալ եւ ներկայացնել նաեւ Սրբազան Պատրիարքը, դժբախտաբար անցագրի դժուարութիւն ունեցայ: Ցաւակցութիւններս մեր Միաբանութեան: / ԽՈՍՐՈՎ ՎԱՐԴԱՊԵՏ»<sup>17</sup>:

Խոսքով Վարդապետ որպէս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միաբանութեան ներկայացուցիչներէն մին 4 Մայիս 1963-ին կը մասնակցի յաջորդ գահակալի՝ Խորէն Ա Կաթողիկոսի ընտրութեան<sup>18</sup>: 15-17 Մայիս թուականներուն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ընտրութեանց մասնակցելու համար Սփիւռքի զանազան գաղութներէն Անթիլիաս ժամանած եկեղեցական եւ աշխարհական պատգամաւորներու հետ կ'այցելէ Երուսաղէմ<sup>19</sup>:

Խորէն Կաթողիկոս գնահատելով Խոսքով Վրդ. Էմիրզէեանի եկեղեցանուէր բազմամեայ ծառայութիւնը, որպէս արդար գնահատանք եւ արժանի վարձատրութիւն, 1964-ին անոր կը շնորհէ մանիշակագոյն փիլոն կրելու իրաւունք, ի ժամ հանդիսից եւ տօնից<sup>20</sup>: Այս առթիւ հրապարակուած կենսագրութեան մէջ նշուած էր, թէ Խոսքով Վարդապետ փոխ-տեսուչն է Պոլսոյ Ս. Խաչ դպրեվանքի: Մինչդեռ Տ. Շահան Մ. Վրդ. Սվաճեանի 20 Օգոստոս 1962-ին հրաժարելուն<sup>21</sup> պատճառով թափուր մնացած Ս. Խաչ դպրեվանքի վերատեսչութեան պաշտօնը արդէն իսկ յանձնուած էր անոր, որ իր պաշտօնը ստանձնած էր 1 Դեկտեմբեր 1963-ին<sup>22</sup>: Ան իր պաշտօնը կը շարունակէ մինչեւ 1965-1966 ուսումնական տարեշրջանի աւարտը՝ տալով իր հրաժարականը եպիսկոպոս Դեռնադրուելու առթիւ (այդ թուականէն ետք դպրեվանքի տնօրէն կը կարգուի անուանի արձակագիր Մկրտիչ Մարկոսեան): Խոսքով Վրդ. Էմիրզէեանի տեսչութեան շրջանին Ս. Խաչ դպրեվանքէն շրջանաւարտ եղած են Գրիգոր Մէշալէճեանի, Կարպիս Ալթունօղլուի, Ժան Գալայճըի, Արամ Գարթունի, Մուրատ Պիլիբի, Անդրանիկ Ժինկէօզի, Պարգեւ Պալըմեանի, Թագուր Անանի, Մուրատ Ենօնտէմի, Խաչիկ Երլմագեանի, Հայկ Նշանի, Եղուարդ Թովմասեանի նման յայտնի անուններ:

Խոսքով Վրդ. Էմիրզէեան կը շարունակէր մնալ Մեծի Տանն Կիլիկիոյ միաբանութեան մէկ անդամը եւ իբր այդ իր յարաբերութիւնները ջերմ ու մտերմիկ էին Անթիլիասի հետ: Զոր օրինակ, այդ շրջանին, Օգոստոսին Կիլիկիոյ միաբաններէն Եփրեմ Աբղ. Թապագեան ամուսն արձակուրդի առթիւ կ'այցելէ Պոլիս, որպէս հիւրը Խոսքով Վարդապետին<sup>23</sup>:

Նոյն շրջանին Մեծի Տանն Կիլիկիոյ Խորէն Կաթողիկոսը նամակ մը յղելով, կը յայտնէ Շնորհք Պատրիարքին, թէ որոշուած է իր միաբանակից ընկերներուն հետ ծայրագ-

<sup>16</sup> Անդ:

<sup>17</sup> Ցաւակցական հեռագիրներ, «Հասկ», Թիւ 2-3-4, Փետրուար-Մարտ-Ապրիլ 1963, էջ 227-228:

<sup>18</sup> Ն.Ս.Օ.Տ.Տ. Խորէն Ա. Կաթողիկոսի պատմական ընտրութիւնը, «Հասկ», Թիւ 5-6-7, Մայիս-Յունիս-Յուլիս 1963, էջ 352:

<sup>19</sup> «Նոր Մարմարա», 16 Նոյեմբեր 1966, «Սիոն», Թիւ 5, Մայիս, 1963, էջ 154:

<sup>20</sup> «Հասկ», Թիւ 2-3, Փետրուար-Մարտ, 1964, էջ 95:

<sup>21</sup> «Շողակաթ», Ս. Խաչ Դպրեվանքի 15-ամեակի յանդիման, Ստամպուլ, 1969, էջ 78:

<sup>22</sup> Գիշերը առաւօտը իր մէջ կը կրէ (հրատարակութիւն Ս. Խաչ Դպրեվանքի 50-ամեակին առթիւ), Ստամպուլ, 2003, էջ 24:

<sup>23</sup> «Հասկ», Թիւ 10, Հոկտեմբեր, 1964, էջ 322:

նութեան աստիճան շնորհել հոսսրով Վարդապետին, Անթիլիասի Մայր Տաճարին մէջ: Նկատելով սակայն, որ հոսսրով Վարդապետի անցագրային գործողութիւնները աւարտած չեն տակաւին, հաղորդուած է, թէ կարելի պիտի չըլլայ նշեալ թուականին հասնիլ Լիբանան: Այս առթիւ հոսսրէն Կաթողիկոս խնդրած է Շնորհք Պատրիարքէն, որ պատշաճ առիթով մը ծայրագնութիւն շնորհէ հոսսրով Վարդապետին<sup>24</sup>:

Տուչութեան արարողութիւնը տեղի կ'ունենայ 17 Յունիս 1965-ին, Հինգշաբթի, Պէյօղլուի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ մէջ՝ հանդիսապետութեամբ Տ. Շնորհք Արք. Գալուստեան Պատրիարքի: Օրուան պատարագը կը մատուցէ Տ. Շահան Մ. Վրդ. Սվաճեան: Այս առթիւ խօսած քարոզին մէջ պատրիարքը կ'ըսէ, թէ «ուրախութեամբ կ'ընդուն[ի] ու կը գնահատէ հոսսրով Վարդապետի հեղահամբոյր բնաւորութիւնը, պարկեշտութիւնը եւ կրօնականի վայել ընթացքը»: Ձեռնադրեալի խարտաւիլակն էր Տ. Յարութիւն Քհնյ. Հալաճեան<sup>25</sup>:

Ճիշդ տարի մը վերջ, 13 Յունիս 1966-ին, Կ. Պոլսոյ պատրիարքութեան Կրօնական ժողովը Շնորհք Պատրիարքի առաջարկով կ'որոշէ Տ. հոսսրով Մ. Վրդ. Էմիրզէեանի ու Տ. Շահան Մ. Վրդ. Սվաճեանի տալ եպիսկոպոսացման ընծայագիր՝ պայմանով որ անոնք հրաժարին իրենց միաբանութիւններէն (Շահան Մ. Վարդապետ անդամ էր Երուսաղէմի Ս. Յակոբեանց միաբանութեան) եւ դառնան անդամ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանութեան ու պաշտօնավարեն ընդ իշխանութեամբ Կ. Պոլսոյ պատրիարքութեան:

հոսսրով Մ. Վրդ. Էմիրզէեան այս պարագան Պոլսէն Անթիլիաս ուղղեալ 4 Օգոստոս 1966 թուակիր նամակով մը կը հաղորդէ Մեծի Տանն Կիլիկիոյ հոսսրէն Ա. Կաթողիկոսին՝ այս նիւթի շուրջ խնդրելով ստանալ անոր կարծիքը:

հոսսրէն Կաթողիկոս 24 Օգոստոս 1966 թուակիրով դրական իր պատասխանն ու օրհնութիւնը կը փոխանցէ հոսսրով Մ. Վարդապետին, որպէսզի ան Ս. Էջմիածնի մէջ եպիսկոպոսանալով կարենայ «ծառայել Աստուծոյ եւ ծառայել ժողովուրդին», որովհետեւ «այս եղած է մեր Ս. Աթոռին նշանաբանը անցեալին մէջ, եւ այս է ներկայիս եւ այս պիտի ըլլայ ապագային»<sup>26</sup>:

հոսսրէն Կաթողիկոսի նամակին մէջ ի մէջ այլոց կը կարդանք.

«Մենք որեւէ անպատեհութիւն չենք տեսներ որ երթաք Մայր Աթոռ Ս. Էջմիածին եւ անդ եպիսկոպոսանալով վերադառնաք եւ ծառայէք Իսթանպուլի մեր բարեպաշտ եւ եկեղեցանուէր հայ ժողովուրդին, քանի որ Ս. Աթոռիս արտօնութեամբ մեկնած էիք Պոլիս նոյն այս առաքելութեամբ, եւ Ձեր եպիսկոպոսացումը, բարւոք ծառայութեամբ նուաճուած նոր հանգրուան մը պիտի ըլլայ Ձեր կեանքին մէջ»:

հոսսրէն Կաթողիկոս մէկ կողմէ ցաւ կը յայտնէ հոսսրով Մ. Վարդապետի նման պարկեշտ ու գործունեայ հոգեւորականի մը Կիլիկիոյ Աթոռէն բաժանումին առթիւ, սակայն միւս կողմէ կը մխիթարուի՝ Ս. Էջմիածնի հովանիին տակ Հայց. Առաքելական Ս. Եկեղեցւոյ անոր բերելիք ծառայութեան բաժինով<sup>27</sup>:

Հակառակ 1956 թուականէն վերջ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ու Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միջեւ ստեղծուած ցրտութեան, որ մերթ ընդ մերթ աւելի կը սաստկանար, հոսսրով Մ. Վարդապետի պարագային հեղասահ ու առանց որեւէ խոչընդոտի

<sup>24</sup> «Ժամանակ», 10 Յունիս, 1965, եջ.:

<sup>25</sup> «Ժամանակ», 18 Յունիս 1965, Ուրբ.:

<sup>26</sup> «Հասկ», Թիւ 9, Սեպտեմբեր, 1966, էջ 365-367:

<sup>27</sup> «Հասկ», Թիւ 9, Սեպտեմբեր, 1966, էջ 365-367:



կարգադրուիլը, անշուշտ, մեծ բարեբախտություն կարելի է համարել: Երկու Աթոռներու գահակալներու բարի կամքին միայն վերագրելի է այս հանգամանքը, այլապէս միաբանություններու միջեւ կատարուած փոխանցումը կարելի էր որպէս առիթ օգտագործել նոր վէճեր հրահրելու համար:

### ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԻՒՆ

Եկեղեցական ծառայութեան ուղին շուտով պիտի հասնէր իր ամենաբարձր կէտին: Տարիներու ուսումն ու հնազանդութիւնը, նուիրումն ու զոհողութիւնը պիտի պսակուէին եպիսկոպոսական օծումով: Խոսքով Վարդապետը, որու կեանքը մինչ այդ լի էր ուսումնական, գրական եւ հովուական ծառայութեամբ, այժմ կը բարձրանար նոր աստիճանի՝ ստանալով այն փառքն ու պատասխանատուութիւնը, որ վերապահուած է քիչերու միայն: Եւ սակայն, եթէ այս պահը կը թուէր վերջնագոյն նպատակ, իրականութեան մէջ նոր փորձութեան մը նախերգանքն էր: Որովհետեւ որքան բարձր է մարդը իր կոշումով, այնքան աւելի նուրբ եւ ծանր կ'ըլլայ իր պատասխանատուութիւնը:

Եւ այսպէս, տարի մը վերջ, 24 Յունիս 1966-ին, Շնորհք Պատրիարքի նախագահութեամբ գումարուած Կրօնական ժողովը Խոսքով Մ. Վրդ. Էմիրզէեանի կու տայ եպիսկոպոսութեան ընծայագիր: Ստանալու հայութիւնը խանդավառութեան մէջ է, քանի որ Տ. Տաճատ Եպս. Պատմաճեանի 1927-ի ձեռնադրութենէ վերջ առաջին անգամ է որ եպիսկոպոսներ պիտի ձեռնադրուէին յատկապէս Պոլսոյ Աթոռի համար<sup>28</sup>: Այնքան որ Գոց շուկայի ոսկերիչները անգամ հաւաքաբար գաղափար կը յղանան եպիսկոպոսական մատանիներ նուիրելու նորընծաներուն<sup>29</sup>:

Տ. Խոսքով եւ Տ. Շահան Մայրագոյն Վարդապետները Հայտարարաշարի կայարանէն Սովետական Հայաստան կը մեկնին 26 Հոկտեմբեր 1966-ին, Զորեքշաբթի իրիկուն<sup>30</sup>: Նախքան իրենց մեկնումը եկեղեցական ու աշխարհիկ արարողութիւն մը կը կազմակերպուի նախ Սկիւտարի Ս. Խաչ Եկեղեցւոյ, ապա յարակից համանուն դպրեմանքի մէջ՝ հանդիսապետութեամբ Շնորհք Պատրիարքի, որ դէպի Մայր Աթոռ Ս. Էջմիածին բարի ճանապարհ կը մղուի երիտասարդ հոգեւորականներուն, միաժամանակ ողջունելով դպրեմանքի նորանշանակ տեսուչ Մկրտիչ Մարկոսեանը, որու վաւերացումը նոր հասած էր Ստանպուլի Կրթական տնօրէնութենէ: Ներկաներն ու աշակերտները կը մէկտեղուին վարժարանի սրահը, ուր յանուն խնամակալութեան ելոյթ մը կ'ունենայ տօքթ. Հերմոն Արաքս, իսկ յանուն աշակերտութեան՝ Յարութիւն Կիւվէնեան:

Աւելի վերջ եպիսկոպոսացուներն ու ողջերթ մղութելու փութացած հոգեւորականներն ու աշխարհականները կը խմբուին Հայտարարաշարի կայարանը: Յանուն Ամեն. Ս. Պատրիարք Հօր ներկայ է փոխանորդ Տ. Յարութիւն Քհնյ. Հալաճեան: Շոգեկառքը ժամը 20-ի մօտ կը հեռանայ Հայտարարաշարի կայարանէն, բայց «Նոր Մարմարա» օրաթերթի թղթակից Վարուժան Քէօսէեան հարցազրոյց կատարելու սիրոյն մինչեւ Փէնտիք կ'ուղեկցի երիտասարդ հոգեւորականներուն: «Սա պահուս երբ բաժնուեցանք մեր համայնքի պաշտօնական ներկայացուցիչներէն եւ մեր շատ սիրելի համակիրներէն, այնքան յուզուած ենք տեսնելով անոնց խոր սէրը եւ զուրգուրանքն ու վստահութիւնը մեր անձերուն հանդէպ, ինչպէս որ մեր եղբայր՝ Շահան Հայր Սուրբը ըսաւ կը խնդրենք բո-

<sup>28</sup> «Նոր Մարմարա», 25 Հոկտեմբեր, 1966:

<sup>29</sup> «Նոր Մարմարա», 25 Հոկտեմբեր, 1966:

<sup>30</sup> Այս ուղեւորութեան համար Շնորհք Պատրիարք Տ. Շահան եւ Տ. Խոսքով Մ. Վարդապետներուն կը յատկացնէ 8000 լիւրա: Իրենց վերադարձէն ետք նորապսակ եպիսկոպոսները այս գումարը մաս-մաս վերադարձուցած են (տե՛ս «Նոր Մարմարա», 12 Դեկտեմբեր, 1966):

լորեն որպէսզի աղօթեն մեզ համար եւ Աստուած ըլլայ մեզ օգնական մեր ճանապարհի ընթացքին, մեր Ս. Էջմիածին ժամանման եւ արժանի ըլլանք այդ սուրբ պաշտօնին, որ է Հայ Եկեղեցւոյ ծառայել», կը յայտարարէ Խոսրով Ծ. Վրդ. Էմիրզէեան<sup>31</sup>:

Հայր Սուրբերուն ուղեւորութիւնը դժուար կ'անցնի: Սեբաստիոյ մէջ վակոնին անիւր կը կոտորի եւ անոնք կը փոխադրուին ուրիշ վակոն մը, ուր բաւական անհանգիստ պայմաններ կը սպասէին իրենց: Կարսի մէջ ալ պանդոկ չեն գտներ եւ ստիպուած բաւական ցուրտ ու աղտոտ սենեակի մը մէջ մինչեւ առտու կը նստին: Էմիրզէեան ու Սվաճեան Հայաստան կը հասնին 29 Հոկտեմբեր, Շաբաթ կէսօրին: Զանոնք սահմանին վրայ կը դիմաւորէ Վեհափառ Հայրապետի ներկայացուցիչը: Ապա պոլսեցի հոգեւորականները կ'անցնին Լենինական (այժմ՝ Գիւմրի), ուր կ'ընդունուին տեղւոյն առաջնորդ՝ Տ. Մաշտոց Եպս. Թաճիրեանէ: Նոյն գիշերն իսկ Վեհափառ Հայրապետի կողմէ ուղարկուած ինքնաշարժով կը մեկնին Մայր Աթոռ: Վեհափառ Հայրապետը հիւրերը կ'ընդունի Կիրակի: Ս. Պատարագէն ետք, կէսօրին, Վեհափառ Հայրապետը ի պատիւ Խոսրով եւ Շահան Ծ. Վարդապետներու կը սարքէ սիրոյ սեղան մը:

Անոնք Հայաստանի մէջ կ'այցելեն Պետական ֆիլարմոնիայի համերգասրահը, ուր ներկայ կը գտնուին բնիկ պոլսեցի, հայրենադարձ անուանի խմբավար Յովհաննէս Զիքիճեանի երաժշտահանդէսին, որու ընթացքին կը հնչէ Մոցարթի «Ռէքուիէմ»ը: Անոնք կը տեսնեն նաեւ Մատենադարանը՝ հիանալով հայ միջնադարեան արուեստի գոհար ձեռագիր մատեաններով: Հայր Սուրբերը կ'այցելեն Ս. Հռիփսիմէի, Ս. Գայիանէի, Շողակաթի վանքերը եւ Զուարթնոց Եկեղեցին:

Ծրագրուած էր որ 6 Նոյեմբեր 1966, Կիրակի, Տ. Խոսրով Ծ. Վրդ. Էմիրզէեան պատարագէ Երեւանի Զօրաւոր Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ, սակայն հիւանդութեան պատճառով չի կրնար<sup>32</sup>:

12 Նոյեմբեր 1966, երեկոյեան ժամերգութենէ ետք Սվաճեան ու Էմիրզէեան կը կատարեն իրենց եպիսկոպոսական ուխտը, Իջման Ս. Սեղանի առջեւ, ի վկայութեան Հայկազուն, Յուսիկ եւ Վահան եպիսկոպոսներու:

Յաջորդ օրը՝ 13 Նոյեմբեր 1966-ին, Ամենայն Հայոց Վազգէն Ա կաթողիկոսը Ս. Էջմիածնի Մայր Տաճարի մէջ եպիսկոպոս կը ձեռնադրէ ու կ'օծէ Տ. Խոսրով Ծ. Վրդ. Էմիրզէեանը, որու օծակիցն էր Տ. Շահան Ծ. Վրդ. Սվաճեան: Նոյն օրը, առաւօտեան, Վեհափառ Հայրապետը հետեւեալը կը հեռագրէ Շնորհ Պատրիարքին. «Ողորմութեամբ Աստուծոյ եւ շնորհօք Ս. Հոգւոյ Միածնաէջ Սուրբ Տաճարին մէջ Կիրակի 13 Նոյեմբերին կը կատարենք եպիսկոպոսական ձեռնադրութիւնը եւ օծումը Տ. Շահան եւ Տ. Խոսրով Վարդապետներու Զերդ Սրբազնութեան դիմումին համաձայն, թող անսասան մնայ Հայց. Առաքելական Ս. Եկեղեցին եւ միշտ անշարժ Զեր Պատրիարքական Աթոռը: / Օրհնութեամբ Վազգէն Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց»<sup>33</sup>:

Օրուան Ս. Պատարագը կը մատուցէ Վեհափառ Հայրապետը: Կաթողիկոսին կ'առնթերակայեն Տ. Յուսիկ եւ Տ. Վահան եպիսկոպոսները: Նորընծաներու խարտաւիլակն է Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Հայկազուն Արքեպիսկոպոս: Մինչ այդ, Նոյեմբերի 7-ին Էմիրզէեան հրաժարելով Մեծի Տանն Կիլիկիոյ միաբանութենէն, դիմում ներ-

<sup>31</sup> «Նոր Մարմարա», 27 Հոկտեմբեր, 1966:

<sup>32</sup> Շահան Ծ. Վրդ. Սվաճեան, Նամակ Ս. Էջմիածնէն, «Նոր Մարմարա», 16 Նոյեմբեր, 1966, «Նոր Մարմարա», 19 Նոյեմբեր, 1966, Նոր ձեռնադրեալ եպիսկոպոսներու տեղեկագիրը, «Նոր Մարմարա», 2 Դեկտեմբեր, 1966:

<sup>33</sup> «Նոր Մարմարա», 14 նոյեմբեր 1966:

կայացուցած էր Վազգէն Ա. կաթողիկոսին՝ դառնալով Մայր Աթոռի միաբան: Դիմումը ընդունուած էր Կաթողիկոսի կողմէ:

Յաւարտ եկեղեցական արարողութեանց, ի պատիւ նորած եպիսկոպոսներու ճաշկերոյթ կը սարքուի վեհարանի մէջ, Վազգէն Ա. կաթողիկոսի գլխաւորութեամբ: Յաջորդող երկու օրերուն անոնք իրենց եպիսկոպոսական անդրանիկ պատարագները կը մատուցեն Ս. Էջմիածնի Մայր Տաճարին մէջ:

Նորած եպիսկոպոսները Մայր Աթոռէն հրաժեշտ կ'առնեն Նոյեմբեր 18-ին ու Լենինականի վրայով, շոգեկառքով կը հասնին Պոլիս, Նոյեմբեր 22-ին, Երեքշաբթի: Անոնք իրենց վերադարձի ճամբուն վրայ 5-6 ժամ կը մնան մայրաքաղաք Անգարա, ուր կ'այցելեն անուանի լեզուաբան Յակոբ Մարթայեանի բնակարանը: Էմիրգէեան ու Սվաճեան գիշերը կ'առնեն Անգարայի ճեպլընթացը եւ 22 Նոյեմբերին, առտուն 10-ին կը հասնին Պոլիս, Հայտարարաշայի կայարանը: «Ունեցանք դժուարին ճամբորդութիւն մը, որ կարելի է նկատել մեր եպիսկոպոսական ապաշխարման շրջանը, թէեւ եպիսկոպոսացման համար ապաշխարութեան պէտք չկայ, բայց այդ դժուարին պահերը մեզի պիտի յիշեցնէին եպիսկոպոսական պարտականութիւնները», կ'ըսէ այս առթիւ Խոսրով Սրբազան<sup>34</sup>:

Նորած եպիսկոպոսները ապա կ'ուղղուին Գումգաբու, ուր տեղի կ'ունենայ «Հրաշափառ»ի արարողութիւն, Աթոռանիստ Մայր Եկեղեցւոյ մէջ: Կանոնական աղօթքներէ ետք կ'արտայայտուի Շահան Սրբազան: Նորապսակ եպիսկոպոսները կ'առաջնորդուին պատրիարքարան, ուր դահլիճի մէջ իրենց կը սպասէր Ամեն. Ս. Պատրիարք Հայրը: Նորապսակ եպիսկոպոսները իրեն կը փոխանցեն երկու թիթեղ սրբալոյս միւռոն, զոր առաքած էր Վեհափառ Հայրապետը: Սվաճեան եւ Էմիրգէեան ապա կ'ընդունին համայնքայիններու շնորհաւորանքը<sup>35</sup>:

25 Նոյեմբերին տեղի կ'ունենայ Կրօնական ժողովի հերթական նիստը, որու ընթացքին Շահան եպիսկոպոս կը ներկայացնէ իրենց դէպի Ս. Էջմիածին ուղեւորութեան եւ եպիսկոպոսական ձեռնադրութեան տեղեկագիրը: Անդամ չըլլալով հանդերձ, ժողովին իր մասնակցութիւնը կը բերէ նաեւ Խոսրով եպիսկոպոս: Նկատելով, որ Սահակ Ծ. Վրդ. Փափազեանի վախճանումով թափուր մնացած տեղ մը կար, Շնորհք Պատրիարք Խոսրով եպիսկոպոսը կը հրաւիրէ Կրօնական ժողովի անդամակցութեան<sup>36</sup>:

Խոսրով եպիսկոպոս Պոլսոյ մէջ իր անդրանիկ Ս. Պատարագը կը մատուցէ Ս. Խաչ Եկեղեցւոյ մէջ, Դպրեվանքի հաստատման 13-րդ տարեդարձին առթիւ, 27 Նոյեմբեր 1963-ին: Արարողութեանց կը նախագահէ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, որ ի ժամ Ս. Պատարագի սարկաւազ կը ձեռնադրէ Դպրեվանքի սան տիրացու Եղուարդ Թովմասեանը, տիրացու Ալիքսան Տէր Ողորմեաճեանը (յետագային՝ Տ. Թադէոս Քահանայ) եւ Վարուժան Խըրթաճեանը (յետագային՝ Տ. Բարթող Քահանայ)<sup>37</sup>:

Հայ ոսկերիչներու խոստացած եպիսկոպոսական մատանիները Շահան եւ Խոսրով եպիսկոպոսներու կը յանձնուին պատրիարքարանի մէջ, 23 Դեկտեմբեր 1966, Ուրբաթ, ի ներկայութեան Շնորհք Պատրիարքի: Յանուն Գոյ Շուկայի ոսկերիչներուն, թանկարժէք մատանիները նորապսակ եպիսկոպոսներուն կը յանձնուի յանձնախումբի մը կողմէ, որու անդամներն էին Արտաշէս Սրկ. Նշանեան, Գրիգոր Գովան, Ստեփան Տողրա-

<sup>34</sup> «Նոր Մարմարա», 22 նոյեմբեր 1966:

<sup>35</sup> Տէս «Էջմիածին», Ա.Բ. Յումուար-Փետրուար, 1967, «Նոր Մարմարա», 23 նոյեմբեր, 1966:

<sup>36</sup> «Նոր Մարմարա», 26 նոյեմբեր, 1966:

<sup>37</sup> «Նոր Մարմարա», 28 նոյեմբեր, 1966:

մաճեան եւ Ստեփան էրով<sup>38</sup>:

Խոսքով Եպս. Էմիրզէեան 22 Յունուար 1967-ին, Օրթագիւղի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ կը կատարէ իր առաջին ձեռնադրութիւնը՝ չորս աստիճան եւ ուրար կրելու արտօնութիւն շնորհելով Վազգէն Մաշոյեանի ու Մարգար Ասլանեանի<sup>39</sup>:

15 Հոկտեմբեր 1967-ին հրապարակուած պատրիարքական զեկոյցով մը ստանպոլահայ հասարակութիւնը տեղեակ կը դառնար, որ Շնորհք Պատրիարքի տնօրինութեամբ պատրիարքական փոխանորդ կարգուած է Տ. Խոսքով Եպիսկոպոս՝ փոխարինելով չորս տարիէ ի վեր այդ պաշտօնին վրայ գտնուած Տ. Յարութիւն Քհնյ. Հալաճեանը<sup>40</sup>:

Խոսքով Եպիսկոպոս կարծես հասած էր իր կոշումի գագաթնակէտին: Պատիւներ, պաշտօններ, հաւատացեալ ժողովուրդին եւ առհասարակ համայնքին ցուցաբերած խորին համակրանքն ու ակնածանքը՝ ամէն ինչ կը վկայէր երկար տարիներ տեւելիք նուիրումի եւ տքնաջան ծառայութեան մը մասին: Սակայն այդ արտաքին խաղաղութեան եւ հաստատութեան ետին անտեսանելի ներհակութիւն մը կը շարժէր: Մարդու հոգին երբեմն լուռ կը տկարանայ այն աւանդական կառոյցներուն մէջ, որոնց ծառայութեամբ ինքն է ապրած: Եւ ահա այն պահուն, երբ կը թուէր թէ կեանքը ամբողջութեամբ կայացած է, ճակատագիրը իր համար այլ ուղի մը կը գծէր՝ անկանխատեսելի, հաւանաբար նաեւ անբացատրելի: Այսպէս կը սկսի Խոսքով Եպիսկոպոսի կենսագրութեան եւ ստանպոլահայ ազգային-եկեղեցական արդի պատմութեան ամենախորունկ եւ ողբերգական մէկ շրջանը բնորոշող գայթակղութիւնը:

#### ԳԱՅԹԱԿՂՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆԿՈՒՄ

Եկեղեցական աստիճաններու մէջ կայ խորհրդաւոր հաւասարակշռութիւն մը՝ որքան բարձրանաս, այնքան վտանգաւոր կը դառնայ սայթաքիլը: Խոսքով Եպիսկոպոս՝ երկար տարիներու ծառայութեամբ բարձրացած, Ս. Միւռնի օծմամբ պաշտպանուած եւ բարձր պատիւներով շրջապատուած, յանկարծ կը գտնուի անծանօթ տեղ մը՝ սեփական ներքին տագնապին մէջ: Բարձունքներէն կ'իջնէ ո՛չ թէ արտաքին ուժով, այլ ներքին մղումով մը՝ մեղմ, աննկատ, բայց անդարձ: Կեանքը, որ մինչ այդ դասաւորուած էր քանակի ճշգրիտ գծերով, կը շեղի եւ կը վերածուի անբացատրելի պտոյտի մը: Մարդն է որ կը մնայ առանց փիլոսոփի, առանց պաշտօնի, բայց գուցէ աւելի մերկ ու իրական, քան երբեւէ: Այս անկումը, որքան որ ցաւալի, ունի նաեւ իր մաքրագործող ուժը. երբ սրբութիւնը կ'ընկրկի, անոր տեղը կը մնայ մարդը՝ իր ամբողջ տկարութեամբ եւ լռութեամբ:

4 Փետրուար 1968-ին, Կիրակի, Ս. Փրկիչ Ազգային հիւանդանոցի մէջ եկեղեցական ու աշխարհիկ մեծահանդէս տօնակատարութեամբ բացումը կը կատարուի հանգստարանի բաժնի: Հանդիսութեանց կը նախագահէ Շնորհք Պատրիարքը, որու կողքին են եկեղեցական դասու զոյգ Եպիսկոպոսները՝ Կրօնական ժողովի ատենապետ Շահան Եպս. Սվաճեան ու Պատրիարքական Փոխանորդ՝ Խոսքով Եպս. Էմիրզէեան, որ կը մատուցէ նաեւ օրուան Ս. Պատարագը<sup>41</sup>: Յաջորդ օր՝ 5 Փետրուարին, Խոսքով Եպս. Էմիրզէեան Սամաթիոյ Ս. Գէորգ Եկեղեցւոյ մէջ ներկայ կը գտնուի Պերճ Սրկ. Ծաղիկեանի դէպի

<sup>38</sup> «Նոր Մարմարա», 24 Դեկտեմբեր, 1966:

<sup>39</sup> «Նոր Մարմարա», 23 Յունուար, 1967:

<sup>40</sup> «Նոր Մարմարա», 15 Հոկտեմբեր, 1967:

<sup>41</sup> «Նոր Մարմարա», 5 Փետրուար, 1968:

Երուսաղէմ, Ս. Յակոբեանց վանք ողջերթի արարողութեան<sup>42</sup>:

8 Փետրուար 1968 թուակիր, Հինգշաբթի օրուան «Մարմարա»ի մէջ կը հրատարակուի Պէյօղլուի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ դպրաց դասու եւ «Ասողիկ» երգչախումբի ծանուցումը, ըստ որո՛ւ 11 Փետրուար 1968-ին, Կիրակի, մեծահանգէս տօնակատարութեամբ պիտի նշուէր դպրաց դասու 69-րդ եւ երգչախումբի 44-րդ կրկնակ տարեդարձները, որոնց պիտի հանդիսապետէր, պիտի պատարագէր ու պիտի քարոզէր Պատրիարքական Փոխանորդ Խոսրով Եպս. Էմիրզէեան:

Սրբազան Հայրը սակայն կը բացակայի կիրակնօրեայ պաշտամունքէն: Իր փոխարէն կը պատարագէ ու կը քարոզէ Տ. Յարութիւն Քհնյ. Հալաճեան<sup>43</sup>: Աւելի վերջ պարզ պիտի դառնար, որ Խոսրով Սրբազան արդէն 9 Փետրուար Ուրբաթ օր ալ չէր գացած պատրիարքարան, պատրիարքական փոխանորդի իր պաշտօնի գլուխը<sup>44</sup>:

Այս բացակայութիւնը անսովոր էր. լուրը կը տարածայնուի համայնքի մէջ՝ մտահոգութիւն պատճառելով բոլորին, մանաւանդ որ Սրբազան Հայրը համակրելի ու սիրելի անուն մըն էր եւ կը նկատուէր խոստմնալից մէկ անդամը Հայց. Եկեղեցւոյ:

Հանրային կարծիքը լուսաբանելու եւ Էմիրզէեանի՝ ամուսնալուծեալ կնոջ մը հետ յարաբերութիւն ունեցած ըլլալուն մասին շրջող բամբասանքներուն վերջ տալու համար Կրօնական ժողովը յաջորդ օրուան թերթին մէջ կը հրատարակէ զեկոյց մը, հետեւեալ բովանդակութեամբ.

«Կրօնական ժողովս խոր վիշտով եւ մեծ մտահոգութեամբ լսեց իր նախագահ Սմեն. Ս. Պատրիարք Հօրմէն, թէ չորս-հինգ օրերէ ի վեր մէջտեղ չէ Տ. Խոսրով Եպս. Էմիրզէեան, եւ թէ՛ իր թափած ջանքերը, ինչպէս նաեւ անոր հարազատներու եւ մօտիկ մտերիմներու փնտռտուքները ապարդիւն անցած են իր հետքը գտնելու:

«Ժողովս, նախ քան իր վերջնական որոշման յանգիլը, պատշաճ նկատեց քանի մը օր եւս սպասել, ենթադրելով որ Խոսրով Սրբազան հոգեկան խռովքի մէկ պահուն, կամ ջղային զգացական վիճակի մը մէջ առած ըլլայ որոշում մը, որուն յոռի հետեւանքներուն կ'անդրադառնայ՝ իր հոգեկան եւ մտքի անդորրորութիւնը գտնելէ յետոյ՝ եւ կը վերադառնայ իր բնական եւ հոգեւոր տունը»<sup>45</sup>:

Օրեր տեւած փնտռտուքէ ու մտահոգ սպասումէ ետք, 14 Փետրուար 1968, Զորեքշաբթի կէսօրին Խոսրով Եպս. Էմիրզէեանը եւ հետը գտնուող կինը կարելի կ'ըլլայ գտնել Զրաղանի պանդոկի մէջ: Պէյօղլուի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ թաղային խորհուրդի Ատենապետ՝ Թագլոր Գամէր եւ Սրբազան հօր ամենամտերիմ բարեկամներէն Տիգրան Գէորգեան, որոնք առաջին օրէն իսկ ամէն ջանք ի գործ դրած էին զինք գտնելու, երկարատեւ զրոյց մը կ'ունենան անոր հետ՝ համոզելու, թէ սխալ ընթացքի մէջ է:

Սակայն Խոսրով Սրբազան գիտակից է իր յանցանքին՝ դրժած ըլլալու կուսակրօնութեան ուխտը, հետեւաբար անկարելի է հոգեւոր կեանք վերադարձը: Սրբազանը իր այս վերջնական որոշումը իր անյայտացման օրն իսկ, անցեալ Ուրբաթ, երկտող նամակով մը արդէն հաղորդած է Սմեն. Ս. Պատրիարք Հօր՝ զայն ստորագրելով իր աւագանի անունով՝ Անդրանիկ Էմիրզէեան<sup>46</sup>:

<sup>42</sup> «Նոր Մարմարա», 6 Փետրուար, 1968:

<sup>43</sup> «Նոր Մարմարա», 12 Փետրուար, 1968:

<sup>44</sup> «Նոր Մարմարա», 13 Փետրուար, 1968:

<sup>45</sup> «Նոր Մարմարա», 13 Փետրուար, 1968:

<sup>46</sup> Ողջ համայնքին մէծ վրդովմունք պատճառած նիսբին մասին բոլորին յայտնի երգիծական ոճով կը գրէ նաեւ



Կարճ ժամանակ անց Ամեն. Ս. Պատրիարք Հօր թելադրութեամբ պանդոկ կը փութայ Կրօնական ժողովի ատենապետ Շահան Սրբազան, սակայն վերջինս տեղեակ կը պահեն, թէ խոսքով եպս. Էմիրզէեան Անահիտ անուն այրի կնոջ մը ընկերակցութեամբ դուրս ելած է պանդոկէն: (Ի դէպ, Անահիտ եղած էր կինը ստանալու հայ համայնքի յայտնի դէմքերէն, վաշխառու Ֆէրտինանտ Մանուկեանի): Յառաջացեալ ժամերուն յայտնի կը դառնայ որ անոնք «Հիլթըն» պանդոկի մէջ են: Շահան Սրբազան կ'երթայ «Հիլթըն», ուր կարելի կ'ըլլայ հանդիպիլ օժակից եղբօր: Վերջինիս աներեր է. կ'ըսէ, որ թողած է կարգը եւ այլեւս կը պատկանի աշխարհականներու դասուն: Կէս-գիշերին Շահան Սրբազան հեռաձայնով անցուդարձին տեղեակ կը պահէ Շնորհք Պատրիարքը, որ մինչեւ այդ ուշ ժամը կը սպասէր բարի լուրի մը<sup>47</sup>:

Այս իրադարձութիւններու յաջորդ օրն իսկ, 15 Փետրուար, Հինգշաբթի, Կրօնական ժողովը նիստ կը գումարէ պատրիարքարանի մէջ, նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր: Կրօնական ժողովի անդամներուն տեղեկութիւն կը տրուի խոսքով Սրբազանը իր բռնած սխալ ճամբայէն դարձնելու ուղղութեամբ հոգեւորական թէ աշխարհիկ հեղինակաւոր անհատներու կողմէ յումպէտս կատարուած ջանքերուն ու թախանձագին յորդորներու մասին: Ուստի «Կրօնական ժողովս համոզում գոյացուցած ըլլալով որ նախկին եպիսկոպոսը կորսնցուցած է իր մտքին կրօնական ու բարոյական պայծառութիւնը եւ ինկած է կոյր բնագոյական ոյժերու ցանցին մէջ, ուրկէ միայն աստուածային հրաշք մը զինքը կրնայ փրկել, եւ սպառած նկատելով իր կողմէ ըլլալիք բոլոր կարելի ճիգերը եւ միջոցները զինք փրկելու համար, սրտի խոր ճմլումով կը տեղեկացնէ մեր հոգեւորական դասուն, պաշտօնական մարմիններուն եւ համայն հաւատացեալ ժողովուրդին, որ խոսքով եպիսկոպոս ուխտադրուծ եղած է իր Եկեղեցիին եւ իր ասպարէզին, առնուազն հինգ անգամ անոր հաւատարիմ մնալու ուխտ ընելէն՝ եւ աշխարհիկ կեանքէ հրաժարման խոստում տալէն յետոյ»<sup>48</sup>:

Տալէ ետք այս բացատրութիւնը, Կրօնական ժողովը պաշտօնապէս կը յայտարարէ, թէ նախկին հոգեւորականը մերկացուած է եկեղեցական իր բոլոր իրաւունքներէն եւ շնորհքներէն:

Նկատի ունենալով, որ խնդրոյ առարկայ անձը եպիսկոպոս մըն է եւ բնական մէկ անգամը Մայր Աթոռի միաբանութեան, այս զարգացումները կը հաղորդուի նաեւ Վազգէն Ա. Կաթողիկոսին՝ վերջնական տնօրինութեան համար<sup>49</sup>:

Մինչ այդ թրքական մամուլն ալ սկսած է հետաքրքրուիլ այս ցնցիլ իրադարձութեան հետ: Թրքական թերթեր կը հաղորդեն, թէ հոգեւորականն ու Անահիտը երկուեկէս տարուան յարաբերութիւն մը ունէին եւ հոգեւորականը իր կարգէն հեռացած է, քանի որ այս սիրային կապը սկսած էր յայտնի դառնալ այլեւս համայնքային շրջանակներուն:

Լուցիֆա Տուտու ծածկանունին տակ պահուրտած Յակոբ Այվազ՝ «Իշթէ ասա՛նկ Անդրանիկ Էֆէնտի» խորագրով («Քուլիս», 1 Մարտ, 1968, էջ 27-30):

<sup>47</sup> «Նոր Մարմարա», 15 Փետրուար, 1968:

<sup>48</sup> «Նոր Մարմարա», 16 Փետրուար, 1968:

<sup>49</sup> Այլապէս անբախտ ու նոյնիսկ գայթակղեցուցիչ այս իրադարձութիւնը որոշ շրջանակներուն աոիթ կու տայ յուզելու այդ շրջանին դէռ օրակարգի վրայ եղող անթիլիասական-էմիաժմական տխուր հակառակութիւնը: «Պայքար» թերթի խմբագիր Յակոբ Սըվասլեան մոռնալով հաւանաբար, թէ խոսքով եպս. Էմիրզէեան անդամ է Մայր Աթոռի միաբանութեան, իր թերթին մէջ անոր մասին կը գրէ «խոսքով անուն Անթիլիասական» մը («Պայքար», 23 Փետրուար, 1968), իսկ սիւնակագիր Կարապի Մուրատեան «Անթիլիասի պտուղ» կ'անուանէ զայն («Պայքար», 7 Մարտ, 1968):

Այդ ժամանակ յատկապէս Պոլիս կը ժամանէ Տ. Շնորհք Վրդ. Գասպարեան, որ խնդրով այդ օրերուն իր շինիչ ու խրախուսիչ քարոզներով ամփօքէր խռովեալ հոգիները<sup>50</sup>:

Խոսքով Եպս. Էմիրզէեանի անուան շուրջ ստեղծուած այս աննախադէպ գայթակղութիւնը արձագանգ կը գտնէ նաեւ ժամանակի թրքական մամուլի մէջ, որ ճիշդն ու սուտը իրարու խառնած խորհրդաւոր ու վիպական պատմութիւն մը կը փորձէր մատուցել ընթերցողներուն: «Հիւրրիէթ» թերթը առաջին էջին վրայ կը հրատարակէ հայ եպիսկոպոսին լուսանկարը ու որպէս խորագիր կը գրէ, թէ 36-ամեայ Տոն-ժուան պատրիարքական փոխանորդը եւ իրեն տարեկից այրիացեալ սիրուհին՝ Անահիտ էրթաշքըրան, խոյս տուած են Չըրաղանի ու Հիլթընի պանդոկներէն եւ անհետացած: «Հիւրրիէթ» կարգաթող հոգեւորականին կը վերագրէր անցեալին պատահած սիրային այլ պատմութիւն մը եւս, Դպրեվանքի իր պաշտօնավարութեան օրերէն: Իբր թէ ան սիրահարուած էր Դպրեվանքի դրացի Ամերիկեան աղջկանց քուէճէ աշակերտուհիի մը, սակայն այդ պատմութեան վրան գոցուած էր իր կրօնական խոր հմտութիւններուն պատճառով ու ներում շնորհուած: «Ճոմհուրիէթ» եւ «Պուկիւն» թերթերը նոյնպէս, թէեւ առանց գունաւորելու դէպքը «Հիւրրիէթ»ի աստիճան, կը հաղորդէին լուրը իրենց ընթերցողներուն<sup>51</sup>: «Աքշամ» թերթը Խոսքով Եպս. Էմիրզէեանը կը ներկայացնէր որպէս մէկը որ գլուխ բարձրացուցած է կուսակրօնութեան ուխտին դէմ: Իբր թէ ան եղբօրը հետեւեալը ըսած է. «Ես այս իրաւակարգին դէմ ելայ: Կրօնքին կաղացող այս կողմը պէտք է սրբագրել: Գէթ ինձմէ վերջ եկողները հանգիստ ընեն»<sup>52</sup>:

Իսկ «Հապէր» թերթը ուշադրութիւն կեդրոնացուցած է այս գայթակղեցուցիչ սիրարկածի ազդեցութիւնը իր վրայ կրած անձին՝ այրի կնոջ՝ Անահիտ էրթաշքըրանի նախկին ամսունոյն՝ Ֆէրտինանտ Մանուկեանի վրայ: Վերջինիս ծանօթները վկայած են, որ ան «տասը օրուան մէջ տասը տարի ծերացած է»: Ֆէրտինանտ Մանուկեանի եւ Անահիտ էրթաշքըրանի ամուսնական կեանքը տեւած է քսան տարի: Ունեցած են զաւակ մը: Ըստ թերթի հաղորդման, Ֆէրտինանտ տակաւին կը սիրէր կինը եւ եթէ Էմիրզէեան քաշուի իրենց մէջտեղէն, թերեւս վերստին ամուսնանայ հետը, զաւակին պատճառով: Ֆէրտինանտ Մանուկեան իր աշխատանքի բերմամբ (բարձր տոկոսներով դրամ կու տար) բարեկամութիւն ունէր բոլոր շարժանկարիչներու հետ, որոնք պատրաստակամութիւն յայտնած են գտնելու կինն ու հոգեւորականը, սակայն Մանուկեան ըսած է. «Պատիւս իմ ձեռքովս պիտի մաքրեմ»: Ան յայտարարած է, որ պիտի սպաննէ Անդրանիկ Էմիրզէօղլուն, որ իր ընտանեկան բոյնը քանդած եւ իր պատուին հետ խաղացած է: Որո՞նք միտքէն կ'անցնէր որ պատրիարքական փոխանորդութեան բարձրացած կրօնաւոր մը պիտի քանդէ ընտանեկան յարկը: Զայն մեր տունը կը հրաւիրէինք, օր մը հիւանդացաւ, բժիշկ բերինք ու զայն մահէ ազատեցինք: Անահիտ ճիշդ քսան տարի ինծի հաւատարիմ մնացած երկշոտ կին մըն էր: Առանց ինծի փողոց ոտք չէր նետեր: Դեռ կը զարմանամ որ այս մարդուն ի՞նչ բանը սիրած է», յայտարարած է Մանուկեան «Ատալէթ» թերթին<sup>53</sup>:

<sup>50</sup> «Նոր Մարմարա», 16 Ապրիլ 1968:

<sup>51</sup> Թուրք մամուլը լայնօրէն արձագանգ կը հանդիսանայ կարգաթող Եպիսկոպոս Անդրանիկ Էմիրզէեանի անխորհուրդ սիրարկածին, «Ժամանակ», Թիւ 44, 17 Փետրուար, 1968, էջ 1:

<sup>52</sup> Նախկին Եպս. Էմիրզէեան կը պահանջէ կուսակրօնութեան ջնջումը, «Ժամանակ», Թիւ 45, 18 Փետրուար, 1968, էջ 1:

<sup>53</sup> Ֆերտինանտ Մանուկեան կ'ըսէ «Եթէ Տոն ժուան Պատրիարք Պատրիարք. Փոխանորդը ձեռք անցնեմ պիտի սպաննեմ», «Ժամանակ», Թիւ 47, 20 Փետրուար, 1968, էջ 1:

Կարգաթող Անդրանիկ էմիրզեանի այս մասին եղած առաջին յայտարարութիւններն ալ կարելի կ'ըլլայ ընթերցել դարձեալ թրքական թերթերու, յատկապէս «Հիւր-րիէթ»-ի էջերուն: Փէնթիքի ծովեզերեայ զբօսարաններէն մէկուն մէջ կը մէկտեղուին երիտասարդ զոյգն ու թղթակից էրտողան Քըրալ: «Ես այլեւս կրօնաւոր չեմ, սիրոյս համար հեռացայ եկեղեցիէն, որու համար հինգ տարեկանէս ի վեր կեանքս մաշեցուցի եւ ուսանեցայ: Ձեր դէմը միմիայն Թուրքիոյ Հանրապետութեան հայրենակիցը Անդրանիկ կը գտնուի», կ'ըսէ եւ կը շարունակէ իր խօսքը՝ աչքերը յառած «խօսեցեալ»-ի աչքերուն. «Շատ սիրած էի զայն: Բայց չէի կրնար ամուսնանալ անոր հետ: Թէ՛ եկեղեցի կը վազէի եւ թէ՛ գաղտնօրէն կը ժամադրուէի անոր հետ: Բայց ասիկա՝ իմ կրօնական ըմբռնումովս անպատուութիւն կ'ըլլար: Անցեալ շաբթու Սրբազան Պատրիարքին հրաժարականս ղրկեցի: Այդ վայրկեանէն սկսեալ մօրուքս կտրելով մէկդի ըրի կրօնաւորի հանգամանքս: Ես սիրոյ համար պատիւէ եւ փառքէ հրաժարող առաջին կրօնաւորը չեմ, վերջինն ալ չպիտի ըլլամ, մինչեւ որ այս իրաւակարգը փոխուի»:

Այս առթիւ կ'արտայայտուի նաեւ Անահիտ Էրթաշքըրան. «Անոր մականունը առած օրս աշխարհի ամենէն երջանիկ կիներ պիտի ըլլամ: Առաջին անգամ եկեղեցիի մը մէջ աչք-աչքի եկանք, յետոյ զիրար սիրել սկսանք»<sup>54</sup>:

«Ճումհուրիէթ»-ի սիւնակագիր, յայտնի հրապարակախօս Տողան Նատի իսկ յօդ-ւածով մը կ'անդրադառնայ էմիրզեանի դէպքին՝ այս սիրարկածը համեմատելով Անատոլ Ֆրանսի «Թախս» վէպի իրադարձութիւններուն հետ<sup>55</sup>:

Իսկ հայ համայնքը Անդրանիկ էմիրզեանի ճակատագիրի մասին տեղեկութիւն կը շարունակէ ստանալ թրքական մամուլէն: Այսպէս, «Հաֆթա սոնու» շաբաթաթերթը կը հրատարակէ լուր մը՝ «Փախստական սիրահարները ի մօտոյ կ'ամուսնանան» խորագրով եւ լուսանկարներով հանդերձ եւ տեղեկացնելով, թէ անոնք արդէն իսկ նշան-ւած են: Իրենց ամուսնութիւնը սակայն կը յապաղի, քանի որ Անահիտ իր ամուսնէն բաժնուելու ժամանակ դատարանը որոշած էր 300 օր արգիլել անոնց վերամուսնութիւնը<sup>56</sup>:

«Հաֆթա սոնու»-ի մէջ հետաքրքրական է կարդալ նաեւ համայնքային վերնախաւէն երեք կիներու այս նիւթի շուրջ կատարած յայտարարութիւնները<sup>57</sup>: Սոնա Կեսարի կարծիքով կատարուածին մարդկային կողմը մտածելու կը մղէ: «Անհնար է ներել կրօնապետ մը որ մինչեւ պատրիարքութեան փոխանորդութեան բարձրացած է: Բայց մարդկային տեսակէտով զգացումներս սիրահարներուն հետ է: Եթէ յանցանք փնտըուի, պատրիարքական փոխանորդէն աւելի կնոջ վրայ պէտք է հակիլ: Քանի որ պատրիարքական փոխանորդ մը գլխէ հանելու չափ իգականութեան տէր ահաբեկ կիմ մը ըլլալու է: Հակառակ ասոր Աստուած երկուքն ալ երջանիկ ընէ», ըսած է Կեսար: Իսկ Ճէնիա Պէզազ նոյնպէս կը համակրի զոյգին. «Կը մաղթեմ որ սիրահարները երջանիկ ըլլան: Հակառակ ամէն բանի իրարմէ չեն զատուիր եւ ընկերութիւնը իրենց դէմ կրնան առնել: Ասիկա իրենց սիրոյն մեծութիւնը ցոյց կու տայ: Երկուքն ալ անմեղ են: Անգլիոյ թագաւորը անգամ միթէ սիրոյն համար զահէն չհրաժարեցա՞ւ»: Իսկ Անի Գուլումճեա-

<sup>54</sup> Սիրահար զոյգը մէջտեղ ելաւ, «Ժամանակ», Թիւ 48, 21 Փետրուար, 1968, էջ 4:

<sup>55</sup> Քանանայի մը սիրարկածին ի լուր Անաթօլ Ֆրանսի Թախսը կը յիշեմ, կ'ըսէ Տողան Նատի, «Ժամանակ», Թիւ 52, 25 Փետրուար, 1968, էջ 1:

<sup>56</sup> Անդրանիկ էմիրզեան երկու ամիս յետոյ միայն կրնայ ամուսնանալ Անահիտի հետ, «Ժամանակ», Թիւ 69, 16 Մարտ, 1968, էջ 1:

<sup>57</sup> Անդրանիկ էմիրզեան գաղտնօրէն նշանուեցաւ, «Ժամանակ», Թիւ 56, 29 Փետրուար, 1968, էջ 1, 4:

նի կարծիքով, «մարդու խիղճը եւ ազատութիւնը իրեն կը պատկանի: Քանի որ այսօր քան զիրար սիրեր են, Աստուած երկուքն ալ երջանիկ ընէ»<sup>58</sup>:

Կարգաթող Անդրանիկ Էմիրզէեան «Աքշամ» թերթի թղթակիցին կը յայտարարէ, թէ մտադիր է ընդգրկել լրագրութեան ասպարէզը եւ գրի առնել հոգեւորականներու սիրարկածները<sup>59</sup>:

### ԶՂՋՈՒՄ ԵՒ ԿԱՐԳԱԼՈՒԾՈՒԹԻՒՆ

Անդրանիկ Էմիրզէեանի եւ Անահիտ Էրթաշքերանի կարճատեւ, տազնապալի միասնութենէ յետոյ սկսաւ այն փուլը, որ Խոսրով Սրբազանի ամբողջ կեանքի վրայ պիտի ձգէր ամենախոր հետքը. զղշումի եւ կարգալուծութեան շրջանը: Ինչպէս կը պատահի երբեմն մարդկային ճակատագրերու մէջ, սխալները ոչ միայն կը բաժնեն մարդիկը իրարմէ, այլ նաեւ մարդն ինքն իրմէ: Անդրանիկը կանգնած էր միաժամանակ ներքին դատաստանի եւ եկեղեցական կարգապահութեան առջեւ: Իր առջեւ բացուած էր ո՛չ թէ ճամբայ մը դէպի ապաստան, այլ դէպի մերկ ճշմարտութիւն՝ այն ճշմարտութիւնը, որ կը պարտադրէր ընդունիլ իր մեղքը, դիմադրել ամօթին եւ կրկին փորձել վերագրտնել խիղճը: Կարգալուծութիւնը պիտի դառնար այդ փորձառութեան ամենածանր, բայց նաեւ ամենամաքրող հանգրուանը:

Հազիւ երկու ամիս կը տեւէ Անդրանիկի ու Անահիտի սիրոյ պատմութիւնը: «Հիւր-րիէթ» այս մասին կը հրապարակէ Անահիտի յայտարարութիւնը, ըստ որոյ այս բաժանումին պատճառ եղած է նախկին հոգեւորականի հիւանդութիւնը՝ թեթեւ միքթալը: Զղջացած է Անդրանիկ. «Մարդ եթէ նոյնիսկ կրօնաւոր ըլլայ, ըսել է կը սխալի եղեր: Այլեւս կարելի չէ խորհիլ Անահիտի հետ մեր ամուսնութեան մասին: Կ'ենթադրեմ որ այսուհետեւ ան իր կեանքը, ես ալ իմ կեանքս պիտի ապրիմ»:

Էմիրզէեան կը տեղեկացնէ նաեւ, որ այժմ կը սպասէ Ամենայն Հայոց Հայրապետէն գալիք պատասխանին՝ իր հրաժարման վերաբերեալ:

Վեհափառ Հայրապետի նամակը չ'ուշանար:

Վազգէն Ա Հայրապետի նամակը թուագրուած էր 12 Մարտ 1968 թուականով, որ Պոլսոյ պատրիարքութեան Կրօնական ժողովի նիստին կը քննարկուի 17 Ապրիլին: Վեհափառ Հայրապետը հաստատելով հանդերձ Պոլսոյ եկեղեցական իշխանութեանց կողմէ առնուած որոշումները, խղճի պարտք կը համարէր դիմել անոր՝ կարգաթող հոգեւորականին, լսելու համար վերջին խօսքը, նախքան վերջնական վճռի արձակումը: Այս մասին Հայկազուն Արք. Աբրահամեան նամակ մը գրած էր կարգաթող եպիսկոպոսին: Վեհափառ հայրապետը կը յայտնէր նաեւ, թէ Էմիրզէեանի պատասխանը պիտի սպասէին մինչեւ Ապրիլի 30-ը:

Հայկազուն Սրբազանի նամակը Անդրանիկ Էմիրզէեանի յանձնելու առաքելութեամբ 28 Մարտին վերջինիս կ'այցելէ պատրիարքական նորանշանակ փոխանորդ Տ. Վրթանէս Քհնյ. Փափազեան: Այս առթիւ Էմիրզէեան անոր կը յանձնէ եպիսկոպոսական պանակէն ու մատանին՝ Մայր Աթոռ փոխանցելու համար<sup>60</sup>:

<sup>58</sup> Երբ միջոց մը վերջ կ'աւարտի եպիսկոպոսական այս սիրարկածը, «Պայմար» թերթի մէջ քննադատական տողեր գրի կ'առնուին այս կիներու դէմ՝ «Մեր սօսիւթէի երեւները» խորագրով, Սեբաստացի ստորագրութեամբ (կարելի չ'եղաւ ճշդել ծածկանունան հեղինակը), տե՛ս «Պայքար», Թիւ 42, 25 Ապրիլ 1968, էջ 4:

<sup>59</sup> Անդրանիկ Էմիրզէ լրագրող կ'ըլլայ, «Ժամանակ», Թիւ 57, 1 Մարտ, 1968, էջ 1:

<sup>60</sup> Վեհափառին պաշտօնագիրը ի մասին կարգաթող Խոսրով Էմիրզէեանի, Զեկոյց Կրօն. ժողովի, «Ժամանակ», Թիւ 101, 18 Ապրիլ, 1968, էջ 1:

Ակնյայտ կ'երեւի Ամենայն Հայոց Վազգէն Ա Կաթողիկոսի՝ ենթակային առիթ մը եւս տալու տրամադրութիւնը: Պոլսոյ մէջ շուկաներ կը շրջէին նաեւ, թէ էմիրզէեան զրդ-ջըմնագիր մը ուղարկած է Մայր Աթոռ: Արդարեւ շուկաները կը հաստատուին նոյնինքն Վազգէն Ա Կաթողիկոսի կողմէ, որ «Պայքար» թերթին տուած հարցազրոյցին մէջ պատասխանելով այս մասին եղած հարցումին կը յայտարարէ, թէ էմիրզէեան ուղարկած է չորս էջէ բաղկացած մեղայագիր մը, որու մէկ պատճէնը ինք ուղարկած է Շնորհ Պատրիարքի եւս<sup>61</sup>:

Կարգաթող Եպիսկոպոսը Վեհափառ Հայրապետի ուղղած 3 Ապրիլ 1968 թուակիր այս նամակը կը վերջացնէր հետեւեալ տողերով.

«Ահա, Վեհափառ Տէր, մեղաւորիս որդիական խոստովանանքը Ձերդ Սրբութեան առջեւ: Եթէ այս բոլորէն ետք, հայրական անսահման ներողութեամբ, կը յուսաք թէ տակաւին կարող եմ մեղքերէս սրբուիլ եւ արժանի ըլլալ դարձեալ ծառայելու Աստուծոյ, ես իբրեւ զաւակ Հայց. Եկեղեցւոյ եւ անարժան սպասաւորը Անոր, նաեւ համեստ մէկ միաբանը Մայր Աթոռի, անսալով խղճիս ձայնին եւ Իջման Ս. Սեղանի առջեւ կատարած ուխտիս, պատրաստ եմ հնազանդելու Ձերդ Սրբութեան հրահանգին եւ բարձր տընօրինութեան:

«Անհունօրէն երախտապարտ եմ Ձերդ Սրբութեան եւ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդին, որ զիս փնտռելով պատեհութիւնը տուիք հոգեվիճակս պարզելու եւ անգամ մը եւս նորոգելու Հայց. Ս. Եկեղեցւոյ ծառայելու ուխտս:

«Կամաւ թէ ակամայ գործած սխալներուս համար կրկին ու կրկին ներողութիւն խնդրելով, անհամբեր կը սպասեմ Ձերդ Վեհափառութեան իմաստուն կարգադրութեան եւ հրահանգին»<sup>62</sup>:

Սակայն այս նիւթը Շնորհ Պատրիարքի դիտանկիւնէն վերջնականօրէն փակւած էր այլեւս: Պատրիարք Սրբազանը հարկ կը համարէ այս պարագան անգամ մը եւս յիշեցնել Վեհափառ Հայրապետին. «... կարգաթողը որեւէ ատեն եւ որեւէ պարագային կամ որեւէ պայմանով չի կրնար այլեւս այստեղ վերապաշտօնավարել»: Շնորհ Պատրիարքը իր իրաւասութեան սահմանները փակելով հանդերձ, կանխաւ կը յարգէր Վեհափառ Հայրապետի կատարելիք վերջնական կարգադրութիւնը եւ կը գրէր անոր, թէ էմիրզէեանի «ապաշխարանքի եւ հաւանական ծառայութեան դաշտը ասկէ յետոյ կը լինի Վեհիդ պատշաճ դատած մի ուրիշ տեղ»<sup>63</sup>:

Վեհափառ Հայրապետի մօտեցումը սակայն, ինչպէս ըսուեցաւ, նախկին Եպիսկոպոսին առիթ մը եւս տալու ուղղութեամբ էր: Ան վերջինիս կ'առաջարկէր.

Ա) Մնալ Մայր Աթոռ էջմիածին,

Բ) Սովետական հպատակ դառնալ:

էմիրզէեան թէեւ կ'ընդունի առաջին պայմանը, սակայն կը մերժէ երկրորդը: Սովետական հպատակ դառնալ աքսորանքի հաւասար իրողութիւն մըն էր այդ տարիներուն, երբ երկաթէ վարագոյրի միւս կողմը բնակող քաղաքացիներ զրկուած էին ազատօրէն ճանապարհորդելու իրաւունքէ: Առաւել եւս Թուրքիա, որ գրեթէ թշնամական վերաբերում ունէր սովետական կարգերու դէմ: էմիրզէեան վստահաբար գիտէր, որ

<sup>61</sup> Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա. Կաթողիկոսի մասնաւոր յայտարարութիւնը “Պայքար”, 25 Ապրիլ, 1968, էջ 2:

<sup>62</sup> «Նոր Մարմարա», 13 Դեկտեմբեր, 1989:

<sup>63</sup> Վեհափառին պաշտօնագիրը ի մասին կարգաթող Խոսրով էմիրզէեանի, Զեկոյց Կրօն. ժողովի, «Ժամանակ», Թիւ 101, 18 Ապրիլ, 1968, էջ 1:



սովետական հպատակություն ընդունիլ պիտի նշանակէր խաչ քաշել իր սիրելի ծննդավայրին եւ հոն բնակող իր ազգականներուն ու բարեկամներուն վրայ: Ակամայ իր վերջնական որոշումը յայտնելէ ետք Մայր Աթոռէն կը հասնի կարգալուծութեան որոշումը:

Արդարեւ 5 Օգոստոս 1968-ին Մայր Աթոռէն Շնորհք Պատրիարքին կ'ուղարկուի խոսքով Եպս. Էմիրզէեանի վերաբերեալ Պոլսոյ հայոց պատրիարքութեան առած որոշումները հաստատող եւ զինքը կարգալոյծ հռչակող հեռագիրը՝ Վազգէն Ա Կաթողիկոսի ստորագրութեամբ<sup>64</sup>: Իսկ Գերագոյն հոգեւոր խորհուրդի մանրամասն հաղորդագրութիւնը կը հրապարակուի 10 Օգոստոս 1968-ին եւ լոյս կը տեսնէ «Էջմիածին» պաշտօնաթերթին մէջ:

Նկատի ունենալով Շնորհք Պատրիարքի եւ Կ. Պոլսոյ պատրիարքութեան Կրօնական ժողովի որոշումները, խոսքով Եպիսկոպոսի կարգաթողութեան գրաւոր յայտարարութիւնը, Պոլսոյ եւ Սփիւռքի գաղութներուն մէջ այս գալթակղեցուցիչ արարքին յառաջ բերած վրդովեցուցիչ մթնոլորտը, ինչպէս նաեւ խոսքով Եպիսկոպոսի 3 Ապրիլ եւ 30 Յուլիս թուակիր մեղադրերը, այլեւ 1 Օգոստոսին յատուկ յանձնաժողովին անոր տուած բանաւոր բացատրութիւնը, Գերագոյն հոգեւոր խորհուրդը կարգաթող Եպիսկոպոսի նկատմամբ կը կիրառէ Հայաստանեայց Եկեղեցւոյ կանոնները, յատկապէս Շահապիւանի ժողովի առաջին կանոնը՝ «Եթէ Եպիսկոպոս ոք գտցի ի պղծութեան կամ ի պոռնկութեան, եւ զԱռաքելական զպատին եւ զսուրբ աթոռն անարգեաց, եւ վկայութեամբ ի յայտ եկեսցէ, յաթոռոյն եւ յիշխանութենէն մերժեսցի եւ զքահանայութիւնն մի պաշտեսցէ...», ու կը թելադրէ Վեհափառ Հայրապետին, որպէսզի կարգալոյծ հռչակէ խոսքով Եպիսկոպոսը: Վազգէն Ա կաթողիկոսն ալ ընթացք տալով Գերագոյն հոգեւոր խորհուրդի որոշումին Օգոստոս 5-ին հայրապետական վճիռով կարգալոյծ կը հռչակէ խոսքով Եպիսկոպոսը՝ զինքը դասելով ի շարս աշխարհականաց, իր աւագանի անունով՝ Անդրանիկ Էմիրզէեան (Էմիրզէօղլու)<sup>65</sup>:

Էմիրզէեանի մտերիմ բարեկամ, Ենիգիւղի Գիւտ Տփոյ Ս. Աստուածածնի Եկեղեցւոյ երախտաշատ ծառայողներէն Երուանդ Քէշիշօղլուի հետ ունեցած մեր զրոյցին այս հատուածը եւս կը հաստատէ ժամանակի մամուլէն քաղած մեր տեղեկութիւնները: «Անդրանիկը օր մը մեր գործատեղին եկաւ: «Ես զղջացած եմ ըրածէս», ըսաւ ինծի: Վազգէն Կաթողիկոսին նամակ մը գրեց այդ շրջանին: Պատասխանը եկաւ եւ Կաթողիկոսը զինք կը հրաւիրէր Էջմիածին: Օդանաւով էր զրոյց, հոնկէ ալ շոգեկառքով Երեւան գնաց, սակայն Վազգէն Վեհափառը կը բացակայէր: Իրեն թելադրեցին միջոց մը մնալ հոն, քաշիլ վանք մը զղջումի: Անդրանիկ կոմունիզմի հանդէպ նախապաշարում ունէր եւ չուզեց հոն երկար մնալ: Պոլիս վերադարձին, արդէն իր կախակայումի որոշումը հասաւ Էջմիածինէն»:

Անդրանիկ Էմիրզէեան կարգալոյծ հռչակուելէ ժամանակ մը վերջ, այս անգամ Շնորհք Պատրիարքի ուղղեալ նամակ մը կը գրէ, 27 Ապրիլ 1969 թուականին: Էմիրզէեան կը խնդրէր Պատրիարքէն, որ բարեխօսէ իրեն համար, որպէսզի ո՛չ թէ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, այլ Երուսաղէմի կամ այլ վայրի մը մէջ բոլորէ ապաշխարանքի շրջանի՝ յետագային այնտեղ կամ հոգեւոր իշխանութեան նախատեսած այլ վայր մը ծառայելու հեռանկարով:

<sup>64</sup> Վեհափառը հաստատեց Գերագոյն հոգեւոր խորհուրդի որոշումը ի մասին նախկին խոսքով Եպսկ. Կարգալուծութեան, «Ժամանակ», Թիւ 212, 8 Օգոստոս, 1968, էջ 1:

<sup>65</sup> «Էջմիածին», Օգոստոս-Սեպտեմբեր, 1968, էջ 83-84: Վեհափառ Հայրապետի վնդին կ'անդրադառնայ նաեւ Լուիս Տոտու, «Շատ ապրիս Վեհափառ» խորագրեալ ակնարկով («Քուլիս», Թիւ 520, 15 Օգոստոս, 1968, էջ 28-29):

«Որպէսզի կարենամ փրկել կեանքս եւ հոգիս բարոյական խորտակումէն, անգամ մը եւս կը խնդրեմ Զերդ Ամենապատուութենէն որ զիս չգրկէք հոգիէս աւելի սիրած եկեղեցիէս: Ամենապատիւ Տէր, ամէն վայրկեան պատրաստ եմ գործած մեղքերուս համար ապաշխարելու», գրած էր ան Ամեն. Ս. Պատրիարք Հօր ուղղեալ յիշեալ նամակին մէջ:

Շնորհք Պատրիարքը նպատակադրած էր զինքը ղրկել Եգիպտոս, Ղպտի վանքի մը մէջ ապաշխարելու եւ ապա ծառայելու Գահիրէի Ազգային Առաջնորդարանի մէջ: Դժբախտաբար սակայն Եգիպտոսի ու Իսրայէլի միջեւ սկսած պատերազմը, Եգիպտոսի ներքաղաքական տակնուվրայութիւնը, նոյնիսկ Ղպտոց Կիւրեղ Զ Պատրիարքի ձերբակալութիւնը պատճառ եղան որպէսզի այս ծրագիրը չիրականանայ<sup>66</sup>:

Այսպէս փակուեցաւ Խոսրով Եպիսկոպոսի կենսագրութեան ողբերգական մէկ շրջանը՝ գայթակղութեան, անկման եւ զղջումի պատմութիւնը: Եկեղեցական նուիրապետական աստիճաններէ մերկացած, բայց դեռ սրտին խորքը ճշմարիտ հաւատքին կապուած, ան պիտի շարունակէր իր կեանքը առանց փառքի, սակայն ներքին խաշով մը: Գուցէ եւ այդ լուութեան ու հեռացման մէջ էր, որ ան սկսաւ հասկնալ այն՝ ինչ վաղուց քարոզած էր ուրիշներուն՝ թէ Աստուծոյ առաջ մարդը միայնակ է իր խղճին հետ: Գայթակղութիւնը թէեւ կործանեց արտաքին պատիւները, սակայն դարձաւ հոգեւոր մաքրութեան վերջին դասը՝ այն պահը, ուր անկեալը կը սկսի իր ճամբան ո՛չ թէ վերադառնալու, այլ վերագտնելու համար:

### ՆՈՐ ՍԿԻԶԲ ՄԸ

Գայթակղութեան փոշին տակաւին չէր փարատած, երբ Անդրանիկ էմիրգէեանի կեանքը սկսաւ դանդաղ կերպով վերածեւելիլ: Ինչ որ տարիներ շարունակ կազմած էր եկեղեցական կանոնի ու ծառայութեան շուրջ, այժմ կը պահանջէր ամբողջովին նոր իմաստաւորում: Ոչ-պատուաբեր այս անկումը չէր ջնջած իր մարդկային արմատները՝ գիտելիքը, ճաշակը, նրբազգացութիւնը: Աշխարհիկ կեանք վերամուտը դարձաւ փորձութիւն մը, բայց նաեւ վերածուեցաւ ինքզինքը ճանչնալու հանգրուանի մը: Եւ սակայն, խղճի խորքին մէջ երբեք չէր մարած այն լոյսը, որ անցեալին քահանայական ու եպիսկոպոսական կրկնակ օժմամբ փոխանցուած էր իրեն. այն լոյսն էր, որ վերջապէս պիտի մղէր զինք դէպի խաղաղ ու համեստ վերադարձ՝ ամուսնացեալ քահանայի ծառայութեան:

Նոր կեանք մը կը սկսէր Անդրանիկ էմիրգէեանի համար: Մանկութենէ ի վեր եկեղեցական ասպարէզի համար պատրաստուած, այդ ուղղութեամբ ուսում ստացած, եկեղեցական գետնի վրայ խմբագիրի, մանկավարժի, տեսուչի պաշտօններ ստանձնած, վարչական պատասխանատուութիւններ ստանձնած, ի մի բան եկեղեցական կեանքէ ներս ամենաբարձր աստիճաններու արժանացած անձ մը ի՞նչ կրնար ընել եկեղեցւոյ պատերէն դուրս: Մանաւանդ որ իր պաշտօնէն հեռացած էր անարգ ձեւով մը, կորսնցուցած էր իր վարկը... Զուրէն ելած ձուկ մըն էր ան, կարճ խօսքով. թերեւս ատկէ ա՛լ աւելի վատթար կացութեան մը մէջ էր: Յայտնի է որ մեծ դժուարութիւններու հետ դէմ յանդիման պիտի մնար:

Քէշիշեանի վկայութեամբ, էմիրգէեան կը սկսի մասնաւոր ընկերութենէ մը ներս աշխատիլ, Ղալաթիա: Շրջան մը կ'աշխատի նաեւ Քէշիշեանի ընկերութեան մէջ: «Հա-

<sup>66</sup> «Նոր Մարմարա», 13 Դեկտեմբեր, 1989:

շինները, դրամարկղը վստահած էինք իրեն: Բաւական միջոց մը աշխատեցաւ մեր քով», կ'ըսէ Քէշիշեան, որ իր նախկին եպիսկոպոս ընկերոջ հանդէպ ունեցած սէրն ու անցեալի մտերմութիւնը երբեք չէր կորսնցուցած եւ իր տան դռները եւս լայն բացած էր անոր առջեւ: «Մեր տուն կու գար, կը ճաշէինք, կը շաղակրատէինք»: Էմիրզէեան երջանկութիւն չի գտնէր, դժբախտաբար, իր անձնական կեանքին մէջ: Մեծ գայթակղութեան պատճառ դարձած սիրարկածէն ետք ան կ'ամուսնանայ Սոնիա անուն տիկնոջ մը հետ, որ կը մահանայ երիտասարդ տարիքին: Աւելի ետք կ'ամուսնանայ տիկին Սիւզանի հետ:

Անդրանիկ Էմիրզէեան, ինչպէս Շնորհք Պատրիարքի ուղղեալ նամակին մէջ ալ գրած էր, հոգիէն աւելի կը սիրէր իր Եկեղեցին, որու ծառայութեան մէջ անցած էր կեանքը: Կարգալոյծ հռչակուիլը արգելք չէր, որպէսզի ան չշարունակէ իր ծառայութիւնը: Ան կը սկսի որպէս դպիր, լուսարար ու երաժիշտ ծառայել Թոփգաբուի աղքատիկ թաղի Ս. Նիկողայոս Եկեղեցւոյ: Տարեկան անուան տօնախմբութեան կամ տօնական այլ օրերու առթիւ հիւրաբար Եկեղեցի այցելող հոգեւորականները, տեղւոյն դպրաց դասու, երգչախումբի անդամները, ինչպէս նաեւ համայնքային գործիչները, մամուլ սպասաւորները կամ պարզ հաւատացեալները, շատ լաւ գիտնալով լռիկ-մնջիկ այդ անձին անցեալը, խորապէս կը յուզուէին, կը տխրէին եւ վստահաբար նաեւ կը գնահատէին Էմիրզէեանի օրինակելի ծառայասիրութիւնը:

Նախկին հոգեւորականին վրայ առաջին ուշադրութիւն հրաւիրողը կ'ըլլայ «Մարմարա» օրաթերթը, որ 1982 թուականին, այսինքն աղմկայարոյց գայթակցութենէ մօտ տասնհինգ տարի ետք, կը հրատարակէ անստորագիր ակնարկ մը՝ «Հոգեւոր իշխանութեան նկատառման» խորագրով: Յղուելով Ամեն. Ս. Պատրիարք Հօր մէկ ելոյթին, ուր կ'ըսէր, թէ դպրոցը շէնք չէ, այլ ուսուցիչ, «Մարմարա» զուգահեռ կը ստեղծէր Եկեղեցիի հետ՝ գրելով, թէ ուրեմն Եկեղեցի ալ կը նշանակէ քահանայ, հոգեւորական: «Յայտնի է որ մեր եկեղեցիները արդէն իսկ սկսած են տառապիլ հոգեւորականի, դպիրի, դպրապետի կամ երաժշտապետի սակաւութենէ: Հոգեւորականներու կամ հոգեւոր ծառայութեան նուիրողներու թիւը պիտի չբազմանայ, ընդհակառակը օրէ օր կը նուազի...»: Ապագայի այս մութ հեռանկարի խորապատկերին, «Մարմարա» կ'առաջարկէր հոգեւորականաց դասէ ներս վերստին ընդունիլ Էմիրզէեան նախկին Եպիսկոպոսը, որ ըստ վստահելի տեղեկութիւններու, պատրաստ էր անսակարկ ոգիով եւ անշահախնդիր նուիրումով վերագառնալու իր Եկեղեցին: «Հոգեւոր Վերին Իշխանութիւնները պէտք չէ այլեւս վարանին նպաստաւոր ընթացք տալու այս պատրաստակամութեան, որմէ վստահ ենք թէ մեր եկեղեցիին ապագան ոչինչ պիտի կորսնցնէ, ընդհակառակը շատ բան պիտի շահի»<sup>67</sup>:

Միջոց մը ետք «Մարմարա»ի կը ձայնակցի «Քուլիս» հանդէսը: Ստանպուլահայ եկեղեցական դասու կացութեան մասին խօսելու առթիւ, Լուցիքա Տուտու կը խօսի նաեւ կարգալոյծ հռչակուած խոսքով Էմիրզէեանի մասին՝ ըսելով թէ ան շատ արժէքաւոր ու սիրուած հոգեւորական մըն էր, սակայն դարձաւ զոհը իր երիտասարդական թերութիւններուն ու «վեղարին չի վայելիք պաներ մը ըրաւ»: Բայց ժամանակի ընթացքին հասկըցաւ ան, որ սխալ էր ըրածը եւ սկսաւ դարձեալ ծառայել Եկեղեցւոյ: «Յոյց տուր մեծութիւնդ ու ներէ մեր նախկին եպիսկոպոսը որպէսզի հայ եկեղեցին արժէքաւոր կղերական մըն ալ շահի շնորհիւդ»: Տուտու իր խօսքերը կը վերջացնէ գրելով, որ «պիւթիւն ընթերցողներուս կողմէ կու գամ կոր քու բարձրութենէդ խնդրել որպէսզի բարի ըլլաս

<sup>67</sup> «Նոր Մարմարա», 30 Դեկտեմբեր, 1982:

ներել զայն ու իսթանպուլահայերուս ու իսթանպուլի որբ մնացած եկեղեցիներուս շահեցնես իսկապէս եկեղեցասէր ու արժէքաւոր կղերական մը»<sup>68</sup>: Լուցիքա Տուտու, որ տասնհինգ տարի առաջ «Շատ ապրիս Վեհափառ» խորագրով Հայոց Հայրապետի՝ Էմիր-զէեանի հասցէին արձակած կարգալուծութեան որոշումը կ'ողջունէր<sup>69</sup>, այժմ իր «էրկու ծառքերէ»ն համբուրելով ներում կը հայցէր անոր համար<sup>70</sup>:

Հոկտեմբեր 1988-ին անակնկալօրէն կը վախճանի Պաքըրգիւղի Ծնունդ Ս. Աստուածածնայ Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Տ. Տաթեւ Քհնյ. Քէչէճեան: Տեղւոյն թաղային խորհուրդը 24 Հոկտեմբեր 1988 թուակիր նամակով մը Ամեն. Ս. Պատրիարք Հօրմէ կը խնդրէ, որ Անդրանիկ Էմիրզէեան որպէս մնայուն Քահանայ պաշտօնի կոչուի Պաքըրգիւղի Եկեղեցւոյ մէջ: Կրօնական ժողովի կողմէ տրուած դրական որոշումը Ամեն. Ս. Պատրիարք Հայրը անմիջապէս կը հեռագրէ Մայր Աթոռ: Վեհափառ Հայրապետը գոհունակութեամբ ընդունելով հանդերձ այս հեռագիրը, նախքան վերջնական որոշումի մը յանգիլը կ'ուզէ հարցը քննարկումի յանձնել Գերագոյն հոգեւոր խորհուրդի Մարտ 1989-ի լիագումար նիստի ընթացքին՝ յուսալով «բարւոք լուծում ունենալ»:

Ճիշդ այդ օրերուն, 7 Դեկտեմբեր 1988-ին կը պատահի Սպիտակի աղետաբեր երկրաշարժը եւ բնականաբար Էմիրզէեանի հարցն ալ կը մնայ առկախուած: Շնորհք Պատրիարքը 5 Յուլիս 1989 թուակիր յուշարար նամակ մը կը յղէ Մայր Աթոռ: Ամեն. Ս. Պատրիարք Հայրը այդ օրերուն ուրար կրելու արտօնութիւն կը շնորհէ Անդրանիկ Էմիրզէեանին<sup>71</sup>: Ի վերջոյ Պոլիս կը հասնի Վեհափառ Հայրապետի 17 Հոկտեմբեր 1989 թուակիր նամակը: Վեհափառ Հայրապետը, նկատի ունենալով Ամեն. Ս. Պատրիարք Հօր կրկնակի դիմումները՝ յանուն Կրօնական ժողովի ու Պաքըրգիւղի եկեղեցւոյ թաղային խորհուրդի, եւ վերջին քսան տարիները համարելով ապաշխարութեան շրջան, կ'ընդունէր Շնորհք Պատրիարքի ու հաւատացեալներու աղերսը եւ կ'արտօնէր, որ Խոսրով Էմիրզէեան վերականգնուի իր ծառայութեան մէջ, որպէս Ամուսնացեալ Քահանայ:

Վեհափառ Հայրապետի այս նամակը ստանալէն ետք, Կրօնական ժողովը զղջմնագիր-հաւատարմագիր մը եւս կը պահանջէ ենթակայէն, որ գոհացում կու տայ 4 Դեկտեմբեր 1989 թուակիր նամակով մը՝ ի մէջ այլոց գրելով հետեւեալը. «Վեհափառ Հայրապետի այս իսկապէս ներողամիտ եւ հայրական որոշումը, ինծի նուաստիս համար շնորհներու մեծագոյնն է: Ուստի, որպէս շնորհընկալ, պարտիմ խոնարհաբար յայտնել եւ վստահեցնել Ձերդ Ամենապատուութիւնը թէ անկեղծօրէն զղջացած եմ քսան տարիներ առաջ գործած մեղքիս եւ անոր հետեւանքը եղող կարգաթողութեան տխուր դէպքին համար»:

Էմիրզէեանի պարագան վերջին անգամ կը քննարկուի Կրօնական ժողովի 8 Դեկտեմբեր 1989-ի նիստին եւ միաձայնութեամբ կ'որոշուի զինքը ընդունիլ որպէս Ամուսնացեալ Քահանայ, իր կրօնական նախկին անունով՝ Խոսրով Քհնյ. Էմիրզէեան: Ան ծառայութեան կը կոչուի Ս. Փրկիչ հիւանդանոցի մատրան մէջ<sup>72</sup>:

Այսպէսով Տ. Խոսրով Քհնյ. Էմիրզէեանի համար կը սկսի նոր շրջան մը: Ան հոգեւոր կարգին վրայ վերահաստատուելէ ետք իր անդրանիկ Ս. Պատարագը կը մատուցէ Պաքըրգիւղի Ծ. Ս. Աստուածածնայ Եկեղեցւոյ մէջ, 17 Դեկտեմբեր 1989-ին. Ս. Փրկիչ

<sup>68</sup> Բաց նամակ Վեհափառ Հայրապետիս, «Քուլիս», Թիւ 866, 15 Յունուար, 1983, էջ 25-26:

<sup>69</sup> Շատ ապրիս Վեհափառ, «Քուլիս», Թիւ 520, 15 Օգոստոս, 1968, էջ 28-29:

<sup>70</sup> Բաց նամակ Վեհափառ Հայրապետիս, «Քուլիս», Թիւ 866, 15 Յունուար, 1983, էջ 25-26:

<sup>71</sup> Անդրանիկ Էմիրզէեան Ուրարակի, «Ժամանակ», Թիւ 3739, 3 Յուլիս, 1989:

<sup>72</sup> «Նոր Մարմարա», 13 Դեկտեմբեր, 1989:

մատրան մէջ ալ կը պատարագէ 21 Դեկտեմբեր, Հինգշաբթի:

5 Սեպտեմբեր 1990-ին կայացած պատրիարքական ընտրութեան արդիւնքին 57 քուէ ստանալով կ'ընտրուի Կրօնական ժողովի անդամ (83-րդ Պատրիարք ընտրուած էր Տ. Գարեգին Արք. Գազանճեան)<sup>73</sup>:

2 Մայիս 1991-ին, Հինգշաբթի, Ղալաթիոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ Գարեգին Բ Պատրիարքի նախագահութեամբ կայացած եկեղեցական արարողութեան ընթացքին, ի ժամ Ս. Պատարագի, կը ստանայ աւագութեան պատիւ, Տ. Շահէ Քհնյ. Ալթունեանի եւ Տ. Թադէոս Քհնյ. Տէր Ողորմեանճեանի հետ: Այս առթիւ կը քարոզէ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը՝ «Օծումն զոր ընկալաք ի նմանէ, բնակեսցի ի ձեզ» բնաբանով, եւ երեք Քահանայ Հայրերուն օրհնութեան յատուկ գրով կը շնորհէ ծաղկեայ փիլոն կրեւու արտօնութիւն՝ անոնց նուիրելով մէկական լանջախաչ:

Եկեղեցական արարողութեան աւարտին սարքուած սիրոյ սեղանի ժամանակ տամուկ աչքերով, յուզումնախառն ելոյթ կ'ունենայ նաեւ Տ. Խոսրով Ա. Քհնյ. Էմիրզէեան, որ կը խօսի իր կեանքի վերիվայրումներու մասին եւ կը յայտնէ, թէ մեծ մայրը եկեղեցիի մը մէկ խորշը պահած էր իր կտրուած պորտը: Լրագրողը իր նկարագրական ակնարկին մէջ կը յիշեցնէ Տէր Հօր անցած դժուարին ուղին, միաժամանակ նշելով, թէ ան կը հանդիսանայ եկեղեցական դասու ամենէն արժէքաւոր հոգեւորականներէն մէկը եւ շեշտելով անոր եկեղեցասէր, հաւատացեալ եւ խոնարհ հոգեւորականի, ինչպէս նաեւ լաւ քարոզիչի ու առինքնող հոգեւորի բարեմասնութիւնները<sup>74</sup>:

Ամուսնացեալ քահանայութեան իր կարճատեւ շրջանը կարծես ճակատագրի լուռ փորձութիւնն էր: Վերադարձաւ խորան, սակայն ոչ երկար ժամանակով. մարմինը, որ տարիներ շարունակ հոգեւոր պարտաւորութիւններու ծանրութիւնը տարեր էր, այժմ այլեւս չէր դիմանար: Հիւանդութիւնը իր ուժերը կը խլէր օրէ օր, մինչեւ որ ծառայութիւնը դարձաւ աւելի աղօթքի, քան գործունէութեան ձեւ: Կեանքը կարծես կը կրկնէր իր նախորդ պատկերները՝ ցաւը եւ նուիրումը միասին: Տ. Խոսրով Ա. Քհնյ. Էմիրզէեանի մէջ դժբախտութիւնը երբեք չբաժնուեցաւ կոշումէն. ան քահանայացաւ, բայց զայն չկրցաւ վայելել ամբողջապէս: Սակայն նոյն այդ կիսատ ծառայութիւնը դարձաւ անոր հաւատարմութեան վերջին նշանը՝ լուռ, խոնարհ եւ մարդկային:

Տ. Խոսրով Ա. Քհնյ. Էմիրզէեան յետ երկարատեւ հիւանդութեան վախճանեցաւ Ս. Փրկիչ ազգային հիւանդանոցի մէջ, 31 Հոկտեմբեր 1993-ին: Մահուան գոյժը պաշտօնապէս համայնքին փոխանցուեցաւ Պոլսոյ պատրիարքութեան կողմէ. «Հանգիստ Արժ. Տ. Խոսրով Ա. Քհնյ. Էմիրզէեանի, աւագերիցուն Պաքըրգիւղի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ եւ անդամուն Պատկ. Կրօնական ժողովոյ: Տասնեւհինգամեայ ժամանակաւ վաստակեալ ի սպասաւորութիւն Սրբոյ Եկեղեցւոյ Հայաստանեայց, յետ երկարատեւ հիւանդութեան, փոխեցաւ առ Աստուած ի յոյսն կենացն յաւիտենից»:

Ընտանեկան մահազգին կից լոյս կը տեսնեն Տէր Հօր ծառայութիւն մատուցած հաստատութեանց՝ Պաքըրգիւղի Եկեղեցւոյ եւ յարակից մարմիններու, ինչպէս նաեւ Ս. Խաչ Դպրեվանքի, որու «արժանաւոր տնօրէն»ը եղած էր հանգուցեալը եւ Ս. Փրկիչ հիւանդանոցի (որու մատրան նախկին հոգեւոր հովիւն էր ան) ցաւակցագրերը:

<sup>73</sup> «Նոր Մարմարա», 6 Սեպտեմբեր, 1990:

<sup>74</sup> «Նոր Մարմարա», 3 Մայիս, 1991:



Վախճանեալ Տէր Հօր վերջին օծման ու յուղարկաւորութեան կարգը կը կատարուի 4 Նոյեմբեր 1993-ին, Հինգշաբթի, Պաքըրգիւղի Ծնունդ Ս. Աստուածածնայ Եկեղեցւոյ մէջ, հանդիսապետութեամբ վախճանեալի եպիսկոպոսական ձեռնադրութեան օծակցի՝ Պատրիարքական փոխանորդ Տ. Շահան Արք. Սվաճեանի: Ամեն. Ս. Պատրիարք Հայրը օգակայան երթալու ճամբուն վրայ պահ մը կը հանդիպի Եկեղեցի ու կ'աղօթէ հանգուցեալի դագաղին մօտ: Օրուան Ս. Պատարագը կը մատուցէ Տ. Շահէ Ա. Քհնյ. Ալթունեան: Երգեցողութիւնը կը կատարուին տեղւոյն Քառասուն Մանկանց դպրաց դասուն կողմէ, առաջնորդութեամբ Լեւոն Քարատաղի:

Տ. Շահան Արք. Սվաճեան, որ կը կատարէ վերջին օծումը, կը խօսի պերճաշուք քարոզ մը՝ բնաբան ունենալով «Եւ Աստուած ամենայն շնորհաց որ կոչեաց զձեզ իւր յաւիտենական ի փառսն Քրիստոսիւ Յիսուսիւ, որում փոքր մի եղերուք չարչարակիցք, նա կազդուրեցուցէ, կարողացուցէ հաստատահիմն արասցէ ձեզ» (Ա. Պետրոս, Ե:10): Քարողիչ Սրբազան Հայրը կ'ըսէ, թէ վախճանեալ Քահանայ Հայրը եղած է խոնարհ, համեստ եւ հեզահամբոյր բնաւորութեան տէր հոգեւորական մը եւ թէ եւ բազում չարչարանքներ կրած է ան իր կեանքի տեւողութեան, բայց եւ այնպէս միշտ փարած է Եկեղեցիին, իր ամենէն նկուն դիրքին մէջ անգամ չէ կորսնցուցած իր բուն սէրը Եկեղեցիի հանդէպ<sup>75</sup>:

Տ. Խոսրով Ա. Քհնյ. էմիրզէեանի կենսագրութիւնը դուրս կը մնայ զուտ անհատական վէպի սահմաններէն: Ան կը դառնայ օրինակ մը՝ բացատրելու համար հոգեւոր ծառայութեան եւ մարդկային սահմանափակումներու բախումը Հայ Եկեղեցւոյ նորագոյն պատմութեան մէջ: Էմիրզէեանի դէպքը կը բացայայտէ այն պատմական եւ հոգեբանական բարդ ցանցը, որու մէջ կ'ընթանային հոգեւոր կոշումի փորձառութիւնը, համայնքային ակնկալիքները եւ հաստատութեանական վերահսկողութիւնը: Իր պատմութիւնը կը վկայէ, թէ ինչպէս կրնայ անհատ մը՝ հասած եկեղեցական բարձրագոյն աստիճաններու, դառնալ բարոյական եւ կազմակերպական ճգնաժամի առիթ, եւ միաժամանակ օրինակ մը՝ ներողամտութեան, ապաշխարանքի ու վերադարձի հարցերու շուրջ նոր մտածման: Այս առումով էմիրզէեանի կեանքը արժէքաւոր օրինակ մըն է ո՛չ միայն եկեղեցական պատմագրութեան, այլ նաեւ ժամանակակից հայ հոգեւորութեան ընկերային եւ մարդաբանական ուսումնասիրութիւններու համար:

**ԴՈԿՏ. ՆԱՐԵԿ ՔՇՆՅ ՏԷՅԻՐՄԵՆՃԵԱՆ**

<sup>75</sup> «Նոր Մարմարա», 5 Նոյեմբեր, 1993: